

ՎԱՐԴԱՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՇԱՀԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորված է ԳՂ կրթության և գիտության նախարարության կողմից

Հանրակրթական դպրոցի
8-րդ դասարանի դասագիրք

ԵՐԵՎԱՆ



2013

ՀՏԳ 373.167.1:27 (075.3)

ԳՄԳ 86.3 ց72

Հ 282

Դասագրքի խմբագրական և հեղինակային կազմ

Խմբագիրներ՝

Պ. Գ. Գովհաննիսյան. *պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*

Վ. Ս. Ղանդիլյան. *պատմաբան*

Վարդան վարդապետ Նավասարդյան

Շահե վարդապետ Անանյան

Հեղինակներ՝

Կ. Ա. Մաթևոսյան. *պատմական գիտությունների թեկնածու*

Գ. Ս. Հարությունյան. *պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Պ. Գ. Գովհաննիսյան. *պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Դասագրքի ստեղծմանը մասնակցել և մեթոդական համակարգը կազմել են՝

Ա. Խ. Սարգսյանը. *պատմաբան, պատմության ուսուցիչ*

Ա. Ս. Նազարյանը. *պատմական գիտությունների թեկնածու*

Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթ. դպր. 8-րդ դաս. դասագիրք/
Հ 282 Վ.Ղանդիլյան և ուրիշներ.-Եր.: Տիգրան Մեծ, 2013.-96 էջ:

ՀՏԳ 373.167.1:27 (075.3)

ԳՄԳ 86.3 ց72

ISBN 978-99941-0-553-3

© Հեղինակային կազմ, 2013

© «Տիգրան Մեծ», 2013



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միրելի՛ աշակերտներ

8-րդ դասարանի դասագրքում ներկայացված է Հայոց եկեղեցու IX-XVIII դարերի պատմությունը: Հայոց պատմության դասընթացից դուք ծանոթ եք այս ժամանակաշրջանին, որը հարուստ է քաղաքական կարևոր իրադարձություններով, հոգևոր-մշակութային մեծ ձեռքբերումներով, ազատագրական պայքարի խիզախումներով, ցավոք, նաև կորուստներով ու վայրէջքներով:

Ինչպես միշտ, այնպես էլ այս պատմաշրջանում Հայոց եկեղեցին իր ժողովրդի հետ էր: Հայոց հայրապետներն ամեն կերպ աջակցեցին Բագրատունյաց թագավորության հաստատմանը, իսկ Բագրատունիների անկումից հետո հեռավոր Կիլիկիայում նպաստեցին հայոց նոր պետականության ծնունդին՝ այնտեղ տեղափոխելով կաթողիկոսական աթոռը: Կիլիկիայի պետականության անկումից հետո հայոց հոգևոր կենտրոնը երկարատև դեզերումների արդյունքում վերադարձավ Մայր հայրենիք՝ Սուրբ Էջմիածին: Օտար

տիրապետությունների դժվարագույն տարիներին եկեղեցին ստանձնեց անկախ պետականությունը վերականգնելու, հայոց հոգևոր-մշակութային կյանքը զարգացնելու, մասնատված ժողովրդին համախմբելու պատասխանատվությունը:

Միրելի աշակերտնե՛ր, ուսումնասիրելով Հայոց եկեղեցու պատմությունը՝ է՛լ ավելի կամրապնդվի ձեր սերը հայրենիքի ու ազգային եկեղեցու նկատմամբ:

Հեղինակներ



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ


1. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովուրդը ենթարկվում էր ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև կրոնական խիստ ճնշումների: Օտար տիրապետությունը թոթափելու և անկախությունը վերականգնելու համար մղվող պայքարը գլխավորում էին Հայաստանի առավել զորեղ նախարարական տները՝ **Մամիկոնյանները**, **Բագրատունիները**, **Արծրունիները**, **Սյունիները**: որոնց մեծապես քաջալերում ու աջակցում էր **Հայոց եկեղեցին**:

Շիրակավանի ժողովը: **Չաքարիա Չագեցի**

Անկախ պետականության վերականգնման նախաշեմին՝ արաբ զորավար Բուղայի պատժիչ արշավանքի հետևանքով Հայաստանը ենթարկվեց ծանր փորձության: Այդ ժամանակ բազմաթիվ հայ իշխաններ գերեվարվեցին: Նման պայմաններում տեղի ունեցավ նոր կաթողիկոսի՝ **Չաքարիա Ա Չագեցու (855-876)** ընտրությունը: Սպարապետ Սմբատ Բագրատունին 855 թ. **Շիրակավանում** ժողով գումարեց, որը աննախադեպ որոշում կայացրեց: Կաթողիկոս ընտրվեց ոչ թե եպիսկոպոսներից մեկը, այլ աշխարհական մի անձ, ով թեև հոգևորական չէր, սակայն, սպարապետի ու ժողովականների համոզմամբ, կարող էր համախմբել ու զորացնել եկեղեցին:


Ժողովի ավարտվելուց հետո Բուղայի պահանջով Սմբատ Բագրատունին գնաց Բաղդադ, ուր բազմաթիվ հայ իշխաններ էին գերի տարվել: Հայոց սպարապետն այնտեղ հրաժարվեց կրոնափոխ լինելու առաջարկից և դաժան տանջանքների ենթարկվելուց հետո մահացավ բանտում:



Սաղմոսավանք



Հետագայում նրան շնորհվեց **«Սմբատ Խոստովանող»*** մականունը: Սմբատ սպարապետի գործը շարունակեց որդին՝ Աշոտը, ում էլ վիճակված էր վերականգնել Հայոց պետականությունը: Նա ձեռնամուխ է լինում երկրի միավորման, ուժերի



Դվինի կենտրոնական թաղամասը. վերակազմությունը՝ Ա. Պատրիկի

համախմբման գործին՝ ամենուր իրեն աջակից ունենալով Ջաքարիա Ա Ջագեցուն, ով մեծ սեր ու ժողովրդականություն էր վայելում:

Աշոտ իշխանաց իշխանի և Ջաքարիա կաթողիկոսի համագործակցության վառ օրինակ է նրանց առաքելությունը Վասպուրականում, ուր եղբայրասպան բախումներ էին սկսվել Արծրունի իշխանների միջև: Նրանց հաջողվում է հաշտեցնել իրար դեմ ելած իշխաններին և

երկրամասում խաղաղություն հաստատել: Նույն կերպ կաթողիկոսը զորակցում է Աշոտին՝ Սյունյաց իշխանների հետ հարաբերությունները կարգավորելու հարցում:

Ջաքարիա Ջագեցին մեծ ջանքեր է գործադրում Հայոց թագավորության վերականգնման ուղղությամբ: Նա մի շարք կարևոր քայլեր է ձեռնարկում այդ ծրագիրը կյանքի կոչելու համար: Միջագետքի արաբ ամիրայի հետ բանակցելու ժամանակ նա առաջ է քաշում Աշոտին թագ շնորհելու անհրաժեշտության հարցը: **Ջաքարիա կաթողիկոսը երկու անգամ (869 և 875 թվականներին) գումարել է հայ աշխարհիկ և հոգևոր տերերի ժողով, որոնցում Աշոտը ճանաչվել է Հայոց թագավոր:**

Այս ժամանակ է, որ Կ. Պոլսի Փոտ պատրիարքը դավանական հալածանքներ է սկսում Բյուզանդական կայսրության տարածքում բնակվող հայերի նկատմամբ: Հայոց Ջաքարիա կաթողիկոսը նամակ է գրում Փոտ պատրիարքին՝ բացատրելով, որ հայերը Քաղկեդոնի ժողովը չեն ընդունում, որովհետև այն հակասում է առաջին երեք տիեզերական ժողովների վարդապետությանը: Փոտը նամակ է ուղարկում հայերին և առաջարկում ընդունել քաղկեդոնականությունը՝ համաձայնության դեպքում խոստանալով կայսրության աջակցությունը: Նա Աշոտին նաև որպես նվեր ուղարկում է տերունական խաչափայտի մասունք:

Ջաքարիա կաթողիկոսի և Աշոտ իշխանաց իշխանի նախաձեռնությամբ 862 թ. **Շիրակավանում** գումարվում է ժողով՝ պատասխանելու Փոտ պատրիարքի նամակին: Ժողովը քննում և **մերժում է** պատրիարքի առաջարկը:



Գևորգ Բ Գառնեցի

Ջաքարիա Չագեցուց հետո կաթողիկոս է ընտրվում **Գևորգ Բ Գառնեցին (877-897)**: Գահակալության սկզբում նա մեկնում է Վասպուրական, Տարոն և հաշտեցնում տեղի իշխաններին, իսկ հետագա տարիներին ոչ մի ջանք չի խնայում երկրի միավորման ու ամրապնդման համար:

Գևորգ կաթողիկոսի աթոռակալության ժամանակ է, որ հայ ժողովուրդը վերականգնում է պետական անկախությունը: **885 թ.** ընդառաջելով հայ իշխանների դիմումին՝ Բաղդադի խալիֆը Աշոտ Բագրատունուն ուղարկում է թագ, թագավորական զգեստներ ու պարզևներ, նաև նժույզներ ու զենք: Հայոց իշխանների, զորքի ու բարձրաստիճան հոգևորականների ներկայությամբ Աշոտ Բագրատունին հռչակում է Հայոց թագավոր: Շուտով Աշոտ I-ին թագ է ուղարկում նաև Բյուզանդիայի Վասիլ I կայսրը:



Գևորգ Բ Գառնեցի

Արշակունյաց թագավորության անկումից մոտ չորսուկես դար անց վերականգնվում է հայկական անկախ պետականությունը, որը նաև Հայոց եկեղեցու մեծ հաղթանակն էր:

Աշոտ թագավորից հետո գահի օրինական ժառանգորդ Սմբատ արքայորդու և հայոց սպարապետ Աբասի միջև սկսվում է գահակալական պայքար: Գևորգ կաթողիկոսը ստիպված է լինում կրկին հաշտարար միջնորդի դեր կատարել:

Սմբատ I-ը Երազգավորսուն թագադրվում է Գևորգ Գառնեցու ձեռքով, իսկ Աբաս սպարապետը, հասկանալով իր քայլի կորստաբեր լինելը, գնում է կաթողիկոսի մոտ, զղջում և մեղքերի թողություն խնդրում:

893 թ. Դվինի կործանարար երկրաշարժից հետո Գևորգ կաթողիկոսը ստիպված կաթողիկոսարանը տեղափոխում է Ջվարթնոց: Քիչ անց Ատրպատականի ամիրայի խարդավանքների պատճառով նա շուրջ երկու ամիս գերեվարվում է նույն ամիրայի կողմից: Մեծ փրկագնի շնորհիվ թագավորն ու իշխանները կարողանում են ազատել կաթողիկոսին: Սակայն Սմբատ I-ի և ամիրայի միջև պատերազմը չի դադարում:



Սևանավանք. Ս. Առաքելոց եկեղեցին



Իսկ Գևորգ Գառնեցին, տեղից տեղ փոխադրվելով, ի վերջո մահկանացուն կնքում է Վասպուրականում և թաղվում **Վանի մոտ գտնվող Չորովանքում:**

Գևորգ Գառնեցուց հետո՝ **897 թ.**, կաթողիկոս է ձեռնադրվում նշանավոր հոգևորական, Սևանի վանքի վանահայր **Մաշտոց Ա Եղիվարդեցին:** Դեռ վանահայրության ժամանակ նրա ջանքերով և Սյունյաց Մարիամ իշխանուհու նվիրատվությամբ կառուցվում են Սևանի կղզու **Ս. Առաքելոց** և **Ս. Աստվածածին** եկեղեցիները, որոնք կանգուն են մինչև օրս:

Մաշտոց կաթողիկոսը հռչակված էր իր գիտելիքներով: Նրա անվան հետ է կապվում Հայոց եկեղեցու «Մաշտոց» ծիսական ժողովածուի ամբողջացումը:

Հովհաննես Ե Դրասխանակերտցի: Կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Դվինից Աղթամար



Հովհաննես Ե Դրասխանակերտցի

X դարի սկզբին շարունակվում էր ռազմական հակամարտությունը Ատրպատականի արաբական ամիրայության և Հայաստանի միջև: 908 թ. արաբների օգնությամբ Գագիկ Արծրունին հիմնադրում է Վասպուրականի թագավորությունը: Հայաստանը երկփեղկվում է: Այդ ժամանակ Հայոց կաթողիկոսն էր **Հովհաննես Ե Դրասխանակերտցին (898-929)**, ով նաև պատմիչ էր: Նա գրել է «Հայոց պատմություն» վերնագրով մի աշխատություն, որի մեջ տեղեկացնում է ոչ միայն անցյալի, այլև իր ժամանակների կարևոր իրադարձությունների մասին:

909 թ. Հայաստան ներխուժած Յուսուֆ ամիրայի հետ բանակցելու և պատերազմը կանխելու նպատակով Սմբատ I-ը մեծաքանակ նվերներով նրան ընդառաջ է ուղարկում Հովհաննես կաթողիկոսին: Յուսուֆը սկզբում լավ ընդունելություն է ցուցաբերում, բայց հետո կաթողիկոսին բանտարկում է Դվինում: Ի վերջո, պահանջված փրկագնի մի մասը ստանալով, նրան ազատ է արձակում:

Յուսուֆը, հայ իշխաններից ոմանց գործիք դարձնելով, Սմբատ I-ին ծանր կացության է մատնում: Կապույտ բերդում պաշարված թագավորը ճարահատյալ հանձնվում է ամիրային՝ հաշտության եզր գտնելու հույսով: Սակայն ամիրան նրա հետ դաժանորեն է վարվում. տանջանքների ենթարկելուց հետո հրամայում է գլխատել, իսկ մարմինը խաչ է բարձրացնում **Դվինում (914 թ.):**



Այս եղերական դեպքից հետո Հովհաննես Դրասխանակերտցին նահատակ թագավորի համար հատուկ հիշատակի օր և եկեղեցական տուն է սահմանում:

Ազատագրական պայքարի գլուխ է կանգնում Սմբատի որդին՝ **Աշոտ II Երկաթը**, որը, սակայն, սակավաթիվ ուժեր ուներ:


Հովհաննես Դրասխանակերտցին 918 թ. նամակ է ստանում Կ.Պոլսի պատրիարքից, որի մեջ նա հայերին պայքարը շարունակելու կոչ էր անում՝ նշելով, որ Բյուզանդիան կսատարի նրանց:

Բյուզանդական կայսեր ռազմական օգնությամբ և կաթողիկոսի աջակցությամբ Աշոտ II-ը հաջողությամբ ազատագրում է Հայաստանը արաբներից և սանձում ապստամբ հայ իշխաններին: Շուտով սկսվում է արաբական մի նոր արշավանք: Երկիրը հայտնվում է ծանր կացության մեջ, որի պատճառով Հովհաննես կաթողիկոսն ստիպված կաթողիկոսական աթոռը 927 թ. տեղափոխում է Աղթամար:

Աղթամարում են աթոռակալել Հովհաննես Դրասխանակերտցուն հաջորդած երեք կաթողիկոսները:



Աշոտ II Երկաթի խաչը



*Աղթամարի Ս. հաչ եկեղեցին (915-921 թթ.).
ճարտարապետ՝ Սանուել*



Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ համար է Ամբատ սպարապետը ստացել «խոստովանող» մականունը:
2. Ձեր կարծիքով, ի՞նչն էր պատճառը, որ Աշոտ իշխանաց իշխանը և Ջաքարիա կաթողիկոսը կարողացան խաղաղություն հաստատել Վասպուրականում և Այունիքում:
3. Ինչո՞ւ հայերը մերժեցին Փոտ պատրիարքի՝ քաղկեդոնականություն ընդունելու պահանջը:
4. Ո՞վ 877 թ. ընտրվեց կաթողիկոս:
5. Վերհիշե՛ք, թե ինչպես կատարվեց Աշոտ Բագրատունու թագադրումը:
6. Ի՞նչ դեր խաղաց Գևորգ կաթողիկոսը արքայորդի Ամբատին և սպարապետ Աբասին հաշտեցնելու գործում:
7. Ո՞ւմ ջանքերով և նվիրատվությամբ են կառուցվել Սևանի կղզու Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները:
8. Ի՞նչ գործունեություն է ծավալել Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը Հայաստանի և Ատրպատականի միջև պատերազմը կանխելու նպատակով:
9. Ինչո՞ւ կաթողիկոսական աթոռը հաստատվեց Վասպուրականում:

Գործնական աջխատանք

1. Փաստերով հիմնավորե՛ք, որ աշխարհական Ջաքարիա Չագեցու կաթողիկոս ընտրվելը ճիշտ էր:
2. Տվե՛ք Ջաքարիա կաթողիկոսի բնութագիրը «Հնգյակ» վարժության միջոցով:

Քննարկում

Ի՞նչ դեր է խաղացել Հովհաննես կաթողիկոսը Աշոտ Երկաթի գլխավորած ազատագրական պայքարի հաջողության գործում:

Բառարան

խոստովանող – Հանուն Քրիստոսի չարչարանքների ենթարկված, սուրբ հավատը խոստովանող մարդ:





Լրացուցիչ նյութ

Տեր Ջաքարիան (Ձագեցին) գնում է տեսնելու Շեխի որդի Յիսեին (Իսա իբն Շայխ), և նրա կողմից մեծ պատվի է արժանանում. վերջինս նրան տալիս է շատ պարզևներ, նաև դրոշակ՝ վրան խաչ դնելու և դրանով միշտ իր մոտ մտնելու համար:

Ջաքարիային հաջորդում է Գևորգը՝ պատրիարքարանի տնից: Նրա ժամանակ մեծն Աշոտը, ընդարձակելով իր տարածքը Վրաստանում ու Աղվանքում և կովկասյան ցեղերին էլ իրեն ենթարկելով, ոչ մի բանից պակաս չի մնում, բացի թագից, որի մասին մտածում էին Հայոց իշխանները: Նրանք այդ մասին Յիսեի միջոցով հայտնում են ամիրապետին, և վերջինս ուրախ սրտով ուղարկում է թագ, հանդերձանք ու նժույզներ: Թագ է ուղարկում նաև Վասիլ կայսրը, և Տեր Գևորգն օրհնում է թագը:

Վարդան Արևելցի. Տիեզերական պատմություն



Սմբատ Բագրատունի հայոց սպարապետի չարչարաններն ու մահը

Բուդա արաբ զորավարն իր հետ արքունիք տարավ նաև հայոց Սմբատ Սպարապետին: Եվ խալիֆան բազմաթիվ խոստումներ էր տալիս նրան, միայն թե ընդուներ մահմեդականություն: ...Սակայն մեծ սպարապետ Սմբատը, քաջաբար ելնելով ստիղեն, Քրիստոսի հավատից բնավ չչեղվեց՝ գերադասելով նահատակվել քրիստոնեական հավատի համար: Եվ այդպիսով ուրացություն առաջարկողներին բոլորին պարտության մատնեց: Վիա այդպես էլ աներկյուղաբար մահացավ բանտում՝ մարտիրոսի ու նահատակի անուն ժառանգելով: Նրա աճյունը քրիստոնյաները տարան և հոգևոր երգերի ուղեկցությամբ թաղեցին Դանիել մարգարեի անունը կրող վկայարան-եկեղեցում:

Հովհաննես Դրասխանակերտցի. Հայոց պատմություն



2. ՀԱՅՈՑ ԵՎ ԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ



Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին

Բագրատունիների մղած պայքարը Ատրպատականի ամիրաների դեմ ի վերջո ավարտվում է հաղթանակով: Աշոտ Երկաթից հետո գահ է բարձրանում **Աբաս Բագրատունին (929-953)**: Նրա իշխանության տարիներին երկիրը համեմատաբար խաղաղ պայմաններում էր գտնվում և դուրս է գալիս զարգացման ուղի: Բագրատունիների իշխանության հզորացման շնորհիվ առաջնային հարց է դառնում նաև կաթողիկոսարանի տեղի խնդիրը: Բնականաբար, այն պետք է հնարավորինս մոտ լիներ երկրի քաղաքական կենտրոնին:

Աբաս Բագրատունին իր նստավայր և երկրի մայրաքաղաք **Կարսում** կառուցում է **Կաթողիկե եկեղեցի**՝ նախապատրաստելով կաթողիկոսարանի փոխադրությունն այդտեղ: Դժվարությունը միայն Արծրունիներին համոզելն էր, սակայն Աբասը կարողանում է բանակցությունների միջոցով հարցը կարգավորել:

948 թվականին կաթողիկոս **Անանիա Ա Մոկացին (946-968)** տեղափոխվում է նախ Կարս, ապա Շիրակի **Արզինա** ավան:

Պայքար Սյունյաց և Աղվանից աթոռների անջատողական ծգտումների դեմ

IX դարի երկրորդ կեսին Սյունիքում վերականգնվում է **Սյունյաց** մետրոպոլիտությունը՝ **Տաթև** կենտրոնով:

X դարի սկզբներին Հայոց կաթողիկոսները հեռացել էին Դվինից ու հաստատվել Վասպուրականում: Այդ պատճառով Սյունյաց մետրոպոլիտը մեռն ստանալու համար ամեն տարի չէր կարող գնալ կաթողիկոսի մոտ: Ստեղծված իրավիճակում ավելի հարմար էր մեռնը ստանալ հարևան Աղվանից կաթողիկոսից: Սակայն սա ավանդական կարգի խախտում էր և աստիճանաբար տանում էր Հայոց կաթողիկոսի




դերի նվազեցման: Անանիա Մոկացիին Սյունյաց մետրոպոլիտից և Աղվանից կաթողիկոսից պահանջում է նախկին կարգի վերականգնում և հնազանդություն: Անանիա կաթողիկոսը վերջիններիս հրավիրում է իր մոտ, բայց նրանք չեն ներկայանում:

Հայոց կաթողիկոսն անծանբ գալիս է Սյունիք: Այստեղ նրան դիմավորում են Սյունյաց իշխանները, իսկ Տաթևում նրան ներկայանում է Հակոբ մետրոպոլիտը և հայտնում իր հնազանդությունը:

Սակայն տարիներ անց Հակոբը դարձյալ հրաժարվում է ենթարկվել Հայոց կաթողիկոսին: Մոկացիին ստիպված նորից է գալիս Սյունիք և վերացնում Տաթևի մետրոպոլիտությունը:

958 թ. մահանում են Աղվանից կաթողիկոսը և Սյունիքի եպիսկոպոսը: Մոկացիին, ստանալով այդ լուրը, նորից է գալիս Սյունիք: Կապանում նրան են ներկայանում Սյունյաց իշխանները և գրում են պարտավորագիր՝ խոստանալով հնազանդ լինել կաթողիկոսի հոգևոր իշխանությանը: Սյունյաց իշխաններն ու հոգևորականությունը խնդրում են վերականգնել մետրոպոլիտությունը: Կաթողիկոսը, ընդառաջելով նրանց խնդրանքին, Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրում Ջևանշիր իշխանի որդուն:

Անանիա Մոկացիին վերականգնում է նաև բնականոն հարաբերությունները Աղվանից կաթողիկոսության հետ: Աղվանքի նորընտիր կաթողիկոսը գալիս է Արգինա, օծվում Հայոց կաթողիկոսի կողմից՝ ընդունելով նրա գերագահությունը:



Անանիա Ա Մոկացի

Խաչիկ Արշարունու գործունեությունը

Անանիա Մոկացուց հետո հաջորդաբար կաթողիկոս են ընտրվում **Վահան Ա Սյունեցի** և **Ստեփանոս Գ Սևանցի**:



973 թ. վերջիններիս մահից հետո կաթողիկոս է ձեռնադրվում Անանիա Մոկացու ազգական **Խաչիկ Ա-ն (973-992)**: Մինչև ձեռնադրությունը նա մեծ համբավ ուներ Հայաստանում և կաթողիկոս դառնալուց հետո հանդես է գալիս նորանոր կարևոր գործերով:

Խաչիկ Ա-ն նորոգում է Արգինայի կաթողիկոսարանը, այստեղ կառուցում է Կաթողիկե եկեղեցի՝ հրավիրելով



Անիի Մայր տաճարը (1001 թ.).
ճարտարապետ՝ Տրդատ

Տրդատ ճարտարապետին: Նրա օրոք ծաղկում է Արգինայի վարդապետարանը, ուն բանիմաց սաների թվում կային նաև ազնվականներ: Պատմիչները վկայում են, որ կաթողիկոսը բազմաթիվ ձեռագրեր է արտագրել տալիս, հարստացնում Արգինայի կաթողիկոսարանի մատենադարանը:

Խաչիկ Ա-ն հանդես է գալիս որպես խորագետ, ձեռներեց ու հեռատես գործիչ՝ մեծապես բարձրացնելով կաթողիկոսության վարկը թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում: Նրա կարևոր ձեռնարկներից էր բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ **Անտիոքում և Կիլիկիայի Տարսոն քաղաքում հայկական թեմերի հիմնումը:**

Հոգևոր և մշակութային վերելքը X դարում

X դարի երկրորդ կեսին երկիրն ապրում էր շինարար, ստեղծագործ կյանքով: Սմբատ II Բագրատունին (977-990) ընդարձակում է Անի մայրաքաղաքի պարսպապատ մասը և սկսում քաղաքի **Մայր տաճարի** (Կաթողիկեի) շինարարությունը: Տաղանդավոր Տրդատ ճարտարապետի նախագծած այդ կառույցը դառնում է Բագրատունյաց մայրաքաղաքի զարդը: Սմբատը, սակայն, մահանում է և չի տեսնում շինարարության ավարտը: Նրա եղբայր Գագիկ I Բագրատունու (990-1020) կինը՝ Կատրամիդե թագուհին, ստանձնում է **Կաթողիկեի** շինարարության հովանավորությունը և տաճարի կառուցումն ավարտում 1001 թ.: Մայրաքաղաքում եկեղեցիներ են կառուցում նաև նշանավոր իշխանները, որոնց մեջ աչքի են ընկնում Պահլավունիները: Այս ժամանակաշրջանում Հայաստանում բացվում են բազմաթիվ նշանավոր վանքեր ու դպրոցներ, որոնք վկայում էին երկրում սկսված հոգևոր-մշակութային աննախադեպ վերելքի մասին: Այդ դպրոցներից հատկապես նշանավոր էր Վասպուրականում գտնվող Նարեկավանքի դպրոցը, որի հիմնադիրն ու ուսուցիչն էր Ամանիա Նարեկացին:

Նույն շրջանում հանդես են գալիս բազմաթիվ գիտնական վարդապետներ, ինչպես, օրինակ, Խոսրով Անձևացին, Սամվել Կամրջածորեցին և ուրիշներ: Սակայն առավել հռչակվածը Նարեկավանքի աստվածաբան բանաստեղծն էր՝ Ս. Գրիգոր



Նարեկացին, ում «Մատյան ողբերգության» բացառիկ ստեղծագործությունը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բարձրակետերից մեկն է:

Իր ժամանակի պատմական-քաղաքական դեպքերն ու իրադարձությունները Ս. Գրիգոր Նարեկացին վերլուծում է «Մատյան ողբերգության» կոչված աղոթագրքում: Հեղինակն իր պատանեկությունն ու հետագա ողջ կյանքն անցկացրել է Նարեկավանքում: Շուրջ 70 տարիների իր փորձառությունը նա ամփոփում է 1002-1003 թթ. գրված աղոթամատյանի մեջ: Դեռևս Նարեկացու կենդանության օրոք նրա գրած աղոթագրքին վերագրվում են բուժիչ և հրաշագործ հատկություններ: Ի թիվս այլ գործերի Նարեկացու այս ստեղծագործությունը ծնունդ էր X-XI դդ. Հայոց եկեղեցու հոգևոր-մշակութային զարթոնքի: Ս. Գրիգոր Նարեկացին Հայոց եկեղեցու կողմից դասվել է սուրբ Թարգմանիչների կողքին, իբրև հայոց մեծագույն սրբերից մեկը:



Ս. Գրիգոր Նարեկացի

Հ ա ր ց ե ր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ առաջացավ կաթողիկոսարանի տեղափոխման անհրաժեշտություն:
2. Հայոց ո՞ր թագավորի օրոք և ե՞րբ կաթողիկոսարանը տեղափոխվեց Կարս: Ո՞վ էր կաթողիկոսն այդ ժամանակ:
3. Ե՞րբ վերականգնվեց Սյունյաց մետրոպոլիտությունը:
4. Ինչո՞ւ Անանիա Մոկացին 958 թ. վերականգնեց Տաթևի եպիսկոպոսությունը:
5. Ինչո՞վ է հայտնի Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը:
6. Ո՞վ սկսեց և ո՞ւմ օրոք ավարտվեց Անիի Մայր տաճարի շինարարությունը: Ո՞վ էր տաճարի ճարտարապետը:
7. Այդ շրջանի ի՞նչ գիտնական վարդապետների կարող եք նշել: Ո՞վ էր նրանցից ամենահռչակավորը:
8. Ե՞րբ է գրվել «Մատյան ողբերգության» աղոթագիրքը:



Բ ա ռ ա ր ա ն

Աղոթագիրք, Աղոթամատյան – աղոթքների ժողովածու:

Լ ր ա ց ու ց ի չ ն յ ու ք

Վնանիա Մոկայու ժամանակ վանքերի հիմնադրման մասին

Այս ժամանակ ծաղկելով պայծառացան Հայաստան աշխարհի կրոնավորական կարգերը, և բազում տեղերում կառուցվեցին եղբայրանոցներ, ուր Քրիստոսի սիրով հավաքվեցին մենակյացները:

Առաջինը Կամրջածորի մեծահռչակ ուխտն էր Արշարունյաց գավառում, որի առաջնորդ հայր Հովհաննեսը, արևմտյան աշխարհում Քաղկեդոնի մարդադավան աղանդից հալածվելով, եկավ՝ իր հետ բերելով տերունական հրացուլ նշանը (խաչը): Կամրջածորում բնակվելով՝ նրանք առաջնորդվում էին սուրբ Բարսեղ հայրապետի առաքելական հիմք ունեցող սահմանադրությամբ, ըստ որի՝ «նրանց (միաբանների) մոտ ամեն ինչ ընդհանուր է»:

Իսկ Շիրակ գավառում Հռոռոնոսի կոչված վանքը շինվեց Հովհաննեսի ծեռքով, որը զարդարված էր ողորմածության զարդերով, և մինչև անգամ իր զգեստը հանում ու տալիս էր իրեն հանդիպող աղքատներին...

Այս ժամանակ կառուցվեց Նարեկ (վանքը) Ռշտունյաց գավառում, նույն կարգերով... նույն կարգերով՝ Հնծուց վանքը՝ Կարին գավառում, Դպրեվանքը՝ Շիրակում, Ցախաց քարը՝ Վայոց ձոր գավառում:

Ստեփանոս Տարոնեցի Ասողկ. Տիեզերական պատմություն





Նարեկավանք

Նարեկավանքը հիմնադրվել է 10-րդ դարում Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի ժամանակ՝ Բյուզանդիայից հալածված և Հայաստան գաղթած հայ վանականների կողմից: Վանքի և վանական դպրոցի հիմնադիրն ամենայն հավանականությամբ Անանիա Նարեկացի նշանավոր վարդապետն է՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու ուսուցիչը: Նարեկավանքը գտնվում է պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Ռշտունյաց գավառում, Վանա ծովակի ափին: Նարեկավանքում են թաղված Հայ եկեղեցու երևելի դեմքերից Անանիա Նարեկացին, Գրիգոր Նարեկացին և ուրիշներ: Այստեղ է ժամանակին ստեղծագործել նաև հայտնի պատմիչ Ուխտանեսը: Ավանդության համաձայն՝ այստեղ է ամփոփված եղել նաև Սուրբ Հակոբ Մծբնայի աճյունը: Նարեկավանքը վերջնականապես ավերվել է 1896 թ. քրդական ավազակախմբերի կողմից, որոնք սպանել են վանահորը, 12 վանականների և թալանի ու կողոպուտի ենթարկել վանքը:

Ստեփան Մելիք-Բախշյան. Հայոց պաշտամունքային վայրեր



Նարեկավանք



3.ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՎ ԿԱՅՐԴԻԿՈՍԱՆԻՍ ԱՆԻ ԾԱՂԿՈՒՄԸ

Սարգիս Ա Սևանցու աթոռակալության շրջանը



Գագիկ I Բագրատունու արձանը

Գագիկ I Բագրատունին Սյունյաց մետրոպոլիտության մաս կազմող Սևանի վանքի միաբան Սարգսին ճանաչում էր դեռ պատանեկան հասակից: Խաչիկ Արշարունուց հետո կաթողիկոս է ընտրվում Սարգիս Սևանցին: Պատմիչները մեծ ակնածանքով ու գովեստով են հիշատակում **Սարգիս Ա** կաթողիկոսին (992-1019):

Գագիկ I-ի տիրապետության տարիները համարվում են Անիի թագավորության առավելագույն վերելքի շրջանը: Նրա ժամանակ երկրի հզորության և միասնության ապահովման գործում կարևորագույն դեր ուներ նաև Հայոց կաթողիկոսությունը: Սարգիս Սևանցին 27-ամյա աթոռակալության ընթացքում կարողացավ հմտորեն կազմակերպել հայոց եկեղեցական կյանքը, կաթողիկոսարանի գործունեությունը:

Գագիկ թագավորը շատ մեծ նշանակություն էր տալիս կաթողիկոսությանը՝ այն համարելով առանձին թագավորությունների մասնատված երկրի համախմբման և Անիի գերակա դերի ընդգծման կարևոր միջոց: Բազմաթիվ հարցերում թագավորն ու կաթողիկոսը հանդես էին գալիս միասնաբար:

1001 թ. Գագիկի և Տաշիր–Չորագետի թագավոր Դավիթ Բագրատունու (Անհողին) ռազմական բախումը կանխվում է կաթողիկոսի միջնորդությամբ, և Դավիթը հնազանդություն է հայտնում:

Սարգիս Ա-ի աթոռակալության ժամանակ գլուխ էր բարձրացրել թոնդրակեցիների աղանդը, և կաթողիկոսն անզիջում պայքար էր մղում նրանց դեմ: Նա կարգալույծ* է անում և պատժում թոնդրակեցիներին հարած Հարք գավառի եպիսկոպոսին:



ԱՆԻՆ՝ որպես հոգևոր մայրաքաղաք

Երբ կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Անի, փաստորեն երկրի քաղաքական կենտրոնը դարձավ նաև հոգևոր մայրաքաղաք: Անին ստացավ այնպիսի դեր, ինչպիսին ուներ քրիստոնեական Հայաստանի առաջին մայրաքաղաք Վաղարշապատը, որը և՛ թագավորանիստ էր, և՛ կաթողիկոսանիստ:


Անիի պարսպի ավագ դռան վրա դրոշմված է Բագրատունիների զինանշանը, որը պսակված է խաչի պատկերով: Զինանշանի վրա **հովազն** ու **խաչը** համապատասխանաբար խորհրդանշում են **աշխարհիկ** և **հոգևոր** իշխանությունները, որոնք երկուսն էլ կենտրոնացած էին Անի մայրաքաղաքում:

Անին կառուցվել է որպես քրիստոնեության միջնաբերդ, և պատահական չէ, որ անգամ նրա պաշտպանական շինությունների՝ պարիսպների բուրգերի մեջ ներսի կողմից մատուռներ կամ խորաններ են կառուցվել: Իսկ պարիսպներն արտաքինից ունեցել են տարբեր գույնի քարերից կազմված հսկայական խաչեր, տասնյակ խաչքարեր: Այս ամենը կատարվել է քաղաքի պարիսպները նաև երկնային զորությամբ անառիկ դարձնելու համար:

Անիում կառուցվող հրաշագեղ եկեղեցիներից մի քանիսը ճարտարապետական ձևերով և հարդարանքի տարրերով կրկնում էին հայ ճարտարապետության անցյալի լավագույն նմուշները: Օրինակ՝ Գագիկ I-ի հիմնադրած Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարը VII դարում կառուցված Զվարթնոցի կրկնօրինակությունն էր, Անիի Ս. Առաքելոց եկեղեցին շատ նման էր Էջմիածնի Մայր տաճարին:

Սարգիս Սևանցի կաթողիկոսը Անիում ձեռնարկեց Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու կառուցումը: Շինարարության ավարտից հետո կաթողիկոսը մեծ շուքով Վաղարշապատից այստեղ փոխադրեց Հռիփսիմյանց կույսերի մասունքների մի մասը և Անիում հատուկ տոն հաստատեց: Այս ամենն արվում էր, որպեսզի Անին լինի նաև Հայոց եկեղեցու նվիրական սրբություններն ամփոփող համազգային սրբավայր:

Տարբեր ժամանակներում Անիում և Անիի Մայր տաճարում են պահվել համահայկական նշանակություն ունեցող սրբություններ, մասունքներ ու ձեռագրեր: Անիի մոտ գտնվող Հռոռոնոսի վանքը Անիի Բագրատունյաց թագավորների տոհմական դամբարանն էր:



Անիի Ս. Փրկիչ եկեղեցին



Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է աչքի ընկնում Սարգիս Սևանցու աթոռակալությունը:
2. Ինչո՞ւ էր Գագիկ I-ը կարևորում կաթողիկոսության դերը:
3. Ի՞նչ գործունեություն ծավալեց Սարգիս Սևանցի կաթողիկոսը եկեղեցու ներքին միասնությունն ամրապնդելու համար:
4. Ի՞նչ փաստերով կարող եք հիմնավորել, որ Անին Հայաստանի աշխարհիկ և հոգևոր կենտրոնն էր:

Գործնական աշխատանք

1. «Անի քաղաքի պատմություն» բնագրում Անին կոչվում է «աստվածաբնակ»: Խմբերով (5 հոգանոց) քննարկե՛ք և փորձե՛ք բացատրել, թե ինչու էր քաղաքն այդպես կոչվում: Ձեր խմբի տեսակետը ներկայացրե՛ք դասարանին:
2. Կատարե՛ք «Պրիզմա» վարժությունը «աստվածաբնակ» բառով:

Բառարան

Կարգալույծ անել – որևէ եկեղեցականի հոգևոր աստիճանից զրկել:





Լրացուցիչ նյութ

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցիին Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման մասին

Կատրամիդե թագուհին, որը Սյունյաց Վասակ իշխանի դուստրն էր, բարեպաշտուհի լինելով, կառուցեց Սմբատի հիմնադրած եկեղեցին ամենապայծառ վայելչությամբ, որպես բարձրաբերձ կամարներով գմբեթավորված երկնանման խորան և զարդարեց ծիրանածաղիկ, ոսկեթել նկարազարդ գործվածքներով, արծաթե և ոսկե անոթներով, նաև պայծառ լուսատու անոթների բազմությամբ, որով շողում էր երկնակամարում Անիի Սուրբ Կաթողիկեն:

Այն ժամանակ, երբ լրացավ մեր Տիրոջ մարմնանալու (Քրիստոսի ծննդյան.- խմբ.) հազար տարին, Հայոց Գագիկ թագավորը բարի խորհուրդ հանձն առավ՝ կամեցավ Քաղաքադաշտի սուրբ Գրիգորի անունով կառուցված, բայց քանդված մեծաշեն եկեղեցին (Զվարթնոցը - խմբ.) նույն ձևով ու չափով կերտել Անի քաղաքում: Այն հիմնեց Ծաղկոցածորի կողմում, բարձրավանդակ տեղում՝ տեսնողներին հիացնող մեծ սրբատաշ քարերով և նուրբ զարդաքանդակներով, լուսաբեր պատուհաններով, եռյակ դռներով, սքանչելատես գմբեթով, որ նման էր երկնքի գնդին:

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ. Տիեզերական պատմություն



Ճարտարապետ Թ. Թորանյանը Անիում



4. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԱՆԻԻ թագավորությանը սպառնացող վտանգները և Հայոց եկեղեցին

1019 թ. Գագիկ I-ի համաձայնությամբ և ծերունազարդ Սարգիս կաթողիկոսի ձեռքով Անիում կաթողիկոս է ձեռնադրվում **Պետրոս Ա Գետադարձը (1019-1058)**: Սարգիսը դրանից հետո տեղափոխվում է Անիի մերձակա Հռոռնոսի վանք, ուր ապրում է ևս երեք տարի:

Պետրոս Գետադարձի ձեռնադրությունից մեկ տարի անց մահանում է Գագիկ I թագավորը, և սկիզբ է առնում հայոց պետության քաղաքական ճգնաժամը: Գահը ժառանգած Հովհաննես-Սմբատի (1020-1041) և նրա կրտսեր եղբոր՝ Աշոտի միջև գահակալական կռիվներ են տեղի ունենում, որոնք ավարտվում են կաթողիկոսի և իշխանների միջնորդության շնորհիվ: Սակայն այլևս պարզ էր, որ Անիի թագավորությանը ներքին ու արտաքին վտանգներ էին սպառնում: Թեև Հովհաննես-Սմբատը և Աշոտը հաշտության եզրեր գտել էին, բայց նրանց միջև թշնամանքը չէր վերացել: Բացի այդ, Բյուզանդական կայսրությունը ջանք չէր խնայում իրականացնելու Հայոց թագավորությունը վերացնելու և հայերին քաղկեդոնական դարձնելու իր ծրագիրը:



Հռոռնոսի վանքը



Պետրոս Գետադարծ

1022 թ. հունվարի 6-ին՝ Աստվածա-
հայտնության տոնի օրը, Պետրոս կաթողի-
կոսը Տրապիզոնում Վասիլ II կայսեր ներ-
կայությամբ կատարում է ջրօրհնեքի ծեսը:
Հայ հոգևորականները կաթողիկոսի գլխա-
վորությամբ կանգնած էին գետի հոսանքի
վերին մասում, իսկ հույն հոգևորականնե-
րը՝ ստորին: Հույներն այդպես էին կազմա-
կերպել, որպեսզի վերստին օրհնեն հայերի
օրհնած ջուրը: Պետրոս կաթողիկոսի կա-
տարած ջրօրհնեքից հետո գետի հոսանքը
կանգ առավ, ապա սկսեց հոսել հակառակ
ուղղությամբ: Այստեղից էլ առաջացել է
կաթողիկոսի «Գետադարծ» մականունը:



Անի. Տիգրան Հոնենցի եկեղեցին

Այս նույն հանդիպման ժամանակ կաթողիկոսը հայոց ավագանու համաձայ-
նությամբ Վասիլ II կայսրին է հանձնել Հովհաննես-Սմբատի չարաբաստիկ կտակը,
որով թագավորը հավաստում էր, թե իր մահից հետո Անիի թագավորությունն անց-
նելու է Բյուզանդիային: Թուլակամ գահակալի այս քայլի պատճառն այն էր, որ նա
մինչ այդ աջակցել էր կայսեր դեմ պատերազմած վրաց թագավորին և վախենում էր
հույների վրեժխնդրությունից:

Հայաստան վերադառնալուց հետո Պետրոս կաթողիկոսը զբաղվել է եկեղեցական
կազմակերպական հարցերով: Նա է հիմնել **Բջնիի եպիսկոպոսական** աթոռը, որը հե-
տագայում մեծ դեր է կատարել Արարատյան երկրամասում: Այս պատմական եպիս-
կոպոսության այժմյան ժառանգորդն է **Կոտայքի թեմը**:

Այդ ժամանակ է ստեղծվել նաև **Ամբերդի եպիսկոպոսությունը**, որի ենթակա-
յության տակ էր Նիգ գավառը: Այս եպիսկոպոսությունն էլ հիմք հանդիսացավ այժմ-
յան **Արագածոտնի թեմի** համար:

Պետրոս կաթողիկոսը օժտված էր նաև գրական-երաժշտական շնորհով, հեղի-
նակ է մի շարք շարականների: Նա պատվիրել է պատմագրական մի երկ՝ «Բագրա-
տունյաց պատմությունը», որը, ցավոք, չի պահպանվել:



Հարցեր և առաջադրանքներ

1. Գագիկ I-ից հետո ո՞ւմ միջև գահակալական պայքար ծավալվեց: Ինչո՞վ ավարտվեց այն:
2. Պետրոս կաթողիկոսի «Գետադարձ» մականունը ո՞ր իրադարձության հետ է կապված:
3. Ի՞նչ եպիսկոպոսություններ ստեղծվեցին Պետրոս Գետադարձի կաթողիկոսության տարիներին: Այժմյան ո՞ր թեմերի հիմքը հանդիսացան դրանք:

Քննարկում

Պետրոս Գետադարձի և Հովհաննես-Սմբատի կողմից Բյուզանդական կայսրությանը Հայոց թագավորության հանձնումը կտակով:



Անի. Սմբատաբերդի դարպասը



Լրացուցիչ նյութ

Պետրոս Գեաղարչը և Վասիլ կայսրը

Բյուզանդական Վասիլ կայսրը, կամենալով թերևս մոռանալ իր կրոնական հալածանքները հայերի դեմ, հայոց Պետրոս Ա կաթողիկոսին հրավիրեց Ջրօրհների արարողության՝ Տրապիզոն քաղաքի մոտակայքում, 1023 թ. հունվարի 6-ին: Վասիլ կայսրը, սակայն, հրամայել էր կաթողիկոսին ջուրն օրհնել Տրապիզոնի գետակի վերին հոսանքում՝ ըստ Հայ Եկեղեցու ծիսակարգի, իսկ հույն եպիսկոպոսներին էլ՝ գետակի ներքին հոսանքում, որպեսզի հայերի կողմից օրհնված ջուրը նորից օրհնվի հույների կողմից՝ դրանով կամենալով ցույց տալ Հայ Եկեղեցու դավանանքի սխալ և թյուր լինելը: Սամվել Անեցի պատմիչի վկայությամբ՝ Պետրոս կաթողիկոսի կատարած օրհնության ժամանակ գետը մի պահ կանգ առավ և դադարեց հոսելուց: Ահա այս պատճառով Պետրոս կաթողիկոսին տրվեց «Գետադարձ», այսինքն՝ «գետը դարձնող, կանգնեցնող» մականունը:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան. Ազգապատում, հտ. Ա



Աղջկաբերդը և Ս. Գրիգոր Եկեղեցին Անիում



5. ՀԱՅՈՑ ԵՎ ԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՍԲ ԳՈՐԾԱԴՐՎԱԾ ԸՆԾՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀՎԱԾԱՆՔՆԵՐԸ

Գագիկ Բ և Կ. Պոլիսի ժողովը: Գագիկ Բ-ի ներկայացրած հայոց դավանանքը



Անիի միջնաբերդի ավերակները

1041 թ. մեկը մյուսի ետևից մահանում են Հայոց թագավորներ Աշոտ IV-ն ու Հովհաննես-Սմբատը: Քանի որ վերջինս անգավակ էր, երկրում տիրում էր անհաստատ կացություն: Որոշ քաղաքական պայքարից հետո 1042 թ. Բագրատունյաց գահին է բազմում Աշոտի պատանի որդին՝ **Գագիկ II-ը (1042-1045):** Օծումը մեծ հանդեսով կատարվում է Մայր տաճարում Պետրոս կաթողիկոսի ձեռքով: Սակայն երկու տարի անց Գագիկը խաբեությամբ կանչվում է Կ.Պոլիս, և նրան այլևս թույլ չեն տալիս վերադառնալ Հայաստան: Բյուզանդացիները նրան բնակության վայր հատկացրեցին Կիլիկիայի սահմանագլխին գտնվող **Պիզու** քաղաքը: Բայց դրանով բյուզանդացիները չէին հանգստանում. նրանք ամեն կերպ փորձում էին Գագիկ թագավորին համոզել՝ ընդունելու քաղկեդոնական հավատքը: Հենց այս նպատակով էլ բյուզանդական Ռոմանոս III կայսրը Կոստանդնուպոլիսում ժողով գումարեց՝ կամենալով այդ ժողովի միջոցով համոզել հայոց թագավորին: Գագիկը մերժեց կայսեր առաջարկը՝ նրան ներկայացնելով Հայ եկեղեցու դավանանքը պարունակող մի երկարաշունչ նամակ:

Չնայած հայերի համառ դիմադրությանը՝ բյուզանդացիները 1045 թ. գրավում են Անի մայրաքաղաքը: Նրանք քաղաքից հեռացնում են կաթողիկոսին և Անիի թագավորությունը վերածում բյուզանդական նահանգի:

Հայոց կաթողիկոսական աթոռի դեգերումները

Պետրոս կաթողիկոսի մահվանից հետո՝ **1058 թ. Խաչիկ Բ Անեցին** հռչակվում է Հայոց կաթողիկոս (1058-1065): Ընտրությունից դեռ մեկ տարի էլ չանցած՝ Խաչիկ Բ-ն բյուզանդական կայսեր հրամանով ձերբակալվում է և ուղարկվում Կ. Պոլիս,



այնուհետև աքսորվում: Հայոց կաթողիկոսը արիաբար դիմադրում է բոլոր ճնշումներին և հրաժարվում ենթարկվել Կ. Պոլսի պատրիարքությանը:

Հայոց եկեղեցին այս ծանր վիճակից դուրս բերելու և եկեղեցական կյանքը կանոնավորելու համար Վանանդի նախկին թագավոր Գագիկ Կարսեցուն հաջողվում է 1066 թ. Ծամնդավում ժողով գումարել: Ժողովում կաթողիկոս է ընտրվում Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը, որը պատմության մեջ հայտնի է **Գրիգոր Բ Վկայասեր** անունով: Հայոց եկեղեցու պատմության մեջ սկսվում է **Պահլավունի** տոհմի գահակալության շրջանը, որը տևում է շուրջ **140 տարի**:



Խաչիկ Բ Անեցի

1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո առավել ազդեցիկ մի քանի հայ իշխանական տներ, որոնք ազատվել էին բյուզանդական գերիշխանությունից, փորձում էին ստեղծել քաղաքական նոր կենտրոններ: Համահայկական միասնական քաղաքական կենտրոնի ստեղծմանը հավակնում էին մի շարք գործիչներ (Գագիկ II Բագրատունի, Ալլղարիպ Արծրունի, Փիլարտոս Վարաժնունի, Գող Վասիլ): Բնականաբար, նրանցից յուրաքանչյուրը փորձում էր կաթողիկոսական աթոռը տեղափոխել իր իշխանության տարածք: Սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ հայրապետական աթոռներ ստեղծվեցին Հոնիում, Մարաշում, Տարսոնում: Միաժամանակ



գործում էր նաև Աղվանից կաթողիկոսությունը: Նման իրավիճակը չէր կարող երկար շարունակվել, որովհետև պետականությունից զրկված ժողովուրդը կարող էր կորցնել իր հոգևոր-մշակութային միասնությունը և պառակտվել:



Կաթողիկոսական աթոռի վերականգնումը Անիում

Այս ընթացքում Մեծ Հայքի եկեղեցական մի շարք գործիչներ որոշում են Անիում վերականգնել Հայոց կաթողիկոսությունը: Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ և Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի նախաձեռնությամբ 1081 թ. Վկայասերի քրոջ որդին՝ **Բարսեղը (Բարսեղ Ա), օծվում է Վկայասերին աթոռակից կաթողիկոս:** Բարսեղ Ա-ն 1090 թվականին այցելում է սելջուկյան տերության գահակալ Մելիք Ա շահին, արժանանում հանդիսավոր ընդունելության, որի արդյունքում թեթևանում են Հայաստանից գանձվող հարկերը, բարելավվում է եկեղեցու վիճակը:

Որոշ ժամանակ անց մեկը մյուսի հետևից տարբեր պատճառներով Հոնիի, Մարաշի, Տարսունի կաթողիկոսությունները դադարում են գոյություն ունենալուց:



Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշենք, թե ինչպես բյուզանդացիները տիրացան Անիի թագավորությանը:
2. Ինչո՞վ էր պայմանավորված Բյուզանդիայի անհանդուրժողական վերաբերմունքը Հայոց եկեղեցու նկատմամբ:
3. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Բյուզանդիայի անհանդուրժողական գործելակերպը և՛ Հայաստանի, և՛ կայսրության համար:
4. Ո՞վ և ե՞րբ Պետրոս Գետադարձի կողմից նշանակվեց կաթողիկոսական փոխանորդ:
5. Ծամնդավի 1066 թ. ժողովը ո՞ւմ ընտրեց կաթողիկոս:
6. Հայրապետական ի՞նչ աթոռներ ստեղծվեցին: Ինչո՞վ էր պայմանավորված դրանց առաջացումը, և ինչպիսի՞ վտանգ էր այն իրենից ներկայացնում:



Ք ն ն ա ր կ ու մ

Ինչո՞ւ Գագիկ II-ը մերժեց կայսեր առաջարկը և ներկայացրեց հայոց դավանանքի մասին նամակ:

Գ ո ռ ծ ն ա կ ա ն ա ջ խ ա տ ա ն ք

Այս դասանյութի հիման վրա կատարե՛ք «Կմախք» վարժությունը:



Աճի. Սնբատաբերդ



Լրացուցիչ նյութ

Ինչո՞ւ Գագիկ II-ը պատժեց Կեսարիայի մետրոպոլիտին

Շահնշահ Գագիկը ելավ գնաց և հասավ Գամիրքի Կեսարիա քաղաքը: Նա դեռ վաղուց շատ էր զայրացած հույների դեմ, դրա համար ցատումնալից հարձակվեց Կեսարիայի մետրոպոլիտի վրա, որի անունը Մարկոս էր, քանզի այս չար ու պիղծ հերետիկոսը (հայերին) շատ էր անարգում: Անօրենն այն աստիճան էր լրբացել, որ նույնիսկ իր շան անունը Արմեն էր դրել: Հայոց արքա Գագիկը վաղօրոք լսել էր այդ բոլորի մասին և շատ զայրացել, բայց լինելով հոռոմոց շրջապատում, ոչինչ չէր կարողանում անել: Մետրոպոլիտը համայն հունաց երկրում անուն էր հանել, նա մեծ էր և ահարկու:

Նա [Գագիկը] ... որոշել էր այլևս ոտք չդնել Կոստանդնուպոլիս, այլ գնալ սուլթան Աբասլանի [Ալի Ասլան] մոտ և տիրանալ Հայոց երկրի թագավորական գահին: Սուլթանը բազմիցս էր հրավիրել Գագիկին, բայց քրիստոնեական հավատքը թույլ չէր տալիս գնալ:

Գագիկը երբ մոտեցավ մետրոպոլիտին, ցանկություն հայտնեց նրա մոտ իջևանել: Գագիկի ներկայացուցիչները գնացին և, դիմելով հերետիկոս Մարկոսին, ասացին. «Հայոց Գագիկ արքան ուզում է այսօր քեզ մոտ իջևանել»: Կիր Մարկոսը, լսելով այդ, ուրախացավ և հրաման տվեց իր ամբողջ տունը զարդարել, կամաակամա, քահանաներով հանդերձ, գնաց Գագիկին ընդառաջ և մեծ պատիվներով նրան բերեց տեղավորեց իր տանը: Մարկոսը մեծ ճաշկերույթ տվեց, բայց Գագիկը ամբողջ օրը շատ էր զայրացած:

Երբ գինու ազդեցության տակ սկսեց ուրախանալ, Գագիկն ասաց Կիր Մարկոսին. «Լսել եմ, որ դու մի զորեղ շուն ունես, մենք ուզում ենք նրան տեսնել»: Մարկոսը գլխի ընկավ, թե ինչի համար է նա այդ բանը կամենում և չլսելու տվեց: Երբ Գագիկն իր ասածը կրկնեց, կանչեցին շանը, բայց նա չէր գալիս, որովհետև չէին համարձակվում Արմեն անունով կանչել: Գագիկն ասաց. «Անունը տվեք, որ գա»: Այն ժամանակ Մարկոսը գինու ազդեցության տակ շանը կանչեց և ասաց. «Արմեն, Արմեն»: Շունը եկավ. նա առյուծի էր նման: Գագիկը, տեսնելով նրան, ասաց. «Այս շան անունն Արմեն՞ն է»: Մարկոսը շատ ամաչեց և ասաց. «Քաջ է, դրա համար է, որ Արմեն ենք ասում նրան»: Գագիկը պատասխանեց. «Հիմի կտեսնենք՝ ով է քաջ, Արմեն՞ը, թե՞ հոռոմը»:

Նրանք պատրաստել էին մի պարկ, և Գագիկի ազդանշանով թիկնապահները շրջապատեցին շանը և մեծ դժվարությամբ զցեցին պարկի մեջ: Կիր Մարկոսը,



կարծելով, որ ուզում են շանը իրենց հետ տանել, զայրացավ և սկսեց գոռալ սպասավորների վրա: Գագիկը ժպտաց, ձեռքով նշան արեց սպասավորներին, որոնք շրջապատեցին անօրեն Մարկոսին և բռնությամբ ու քաշքշելով պարկի մեջ գցեցին, Արմեն կոչեցյալի մոտ: Գագիկն ասաց. «Տեսնենք՝ ով է ուժեղ և քաջ, հոռոմ մետրոպոլիտը, թե՞ նրա կողմից Արմեն կոչված շունը»: Գագիկը հրաման տվեց սաստիկ ծեծել շանը, որը կատաղած հարձակվեց Մարկոսի վրա և ատամներով բզկտեց նրան: ... Այսպիսի տանջանքներով սատակեց չար և պիղծ անարգիչը՝ դառնալով շան ճարակ:

Մատթեոս Ուռհայեցի. ժամանակագրություն

Հալածակներ Հայոց կաթողիկոս Խաչիկ Բ Վնեցու նկատմամբ

Այդ ժամանակները Տուկիծ (Դուկաս - խմբ.) կայսրը... սկսեց հալածանքներ հարուցել և հայոց դավանանքի վերաբերյալ ամեն տեսակի հավատաքննություն կատարել: Հատկապես, երբ վախճանվեց տեր Պետրոսը, ահա այն ժամանակ հոռոմները դուրս եկան Սուրբ Աթոռի դեմ՝ ցանկանալով վերացնել այն և ջանալով հայերին գլխովին Քաղկեդոնի անօրեն դավանանքին դարձնել: Այդ ժամանակները հոռոմները Հայոց կաթողիկոս տեր Պետրոսի բազմաթիվ ոսկե և արծաթե գանձերի շուրջ խնդիր բացեցին, Սեբաստիայում շատերին խոշտանգեցին, իսկ Հայոց հայրապետ օծված տեր Խաչիկին, եպիսկոպոսներով հանդերձ... տարան Կոստանդնուպոլիս և երեք տարի աքսորական պահեցին. այդ օրերին հայադավանությունը բազում փորձությունների ենթարկվեց: Հայոց թագավորներն ու իշխանները՝ Գագիկ Անեցին, Սենեքերիմի որդիներ Ատոմն ու Ապուսահլը, շատ ջանք թափեցին և հազիվ կարողացան նրանց ազատել (աքսորից): Այդ բոլորից հետո (Խաչիկին) նստեցրին կաթողիկոսական աթոռին Թավրուրում,* որտեղ նա մնաց երեք տարի, իսկ ամբողջությամբ վերցրած հայրապետական աթոռին նա նստեց վեց տարի:



Մատթեոս Ուռհայեցի. ժամանակագրություն

* Թավրուր – բնակավայր Կիլիկիայում:



Գրիգոր Բ Վկայասեր*

Այս թվականին հայոց ազգիս կաթողիկոսական աթոռին նստեց ամենագովելի տեր Գրիգորիսը, մյուս անունը Վահրամ, Վասակ Բջնեցու որդի Գրիգոր Մագիստրոսի որդին, Պահլավունիների տոհմից: Տեր Գրիգորիսը հայրապետական աթոռին նստեց Աբաս Կարսեցու որդի Գագիկ շահնշահի հրամանով, որովհետև տեր Խաչիկի մահից հետո գտան, որ Սուրբ Աթոռի համար նա է արժանի: Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հռետորական գիտության քաջագիտակ, Աստծո Յին ու Նոր Կտակարաններին քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին: Սուրբ Յոզին սրան մատնացույց արեց՝ նստելու իր նախահայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին, դրա համար էլ նա, հեզությամբ և ամենայն արդարությամբ օժտված մարդը, երկրորդ Գրիգոր անունն ստացավ: Յրաժարվելով աշխարհիկ կյանքից՝ նա (մտածեց) հավիտենական կյանքի մասին. լուսավորեց Յայաստանը բազում և տարբեր մեկնություններով, բոլոր լեզուներից թարգմանություններ կատարեց և Աստծո եկեղեցին լցրեց աստվածային սուրբ գրքերով: Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Յայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող:

Սատրեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն



*** Գրիգոր Բ Վկայասերն այդ անվանն էր արժանացել սրբերի և նահատակների, որոնց անվանում էին նաև քրիստոնեական հավատի վկաներ, կյանքը և գործը ներկայացնող ժողովածուներ ու գրքեր թարգմանելու համար:**

Հ Ա Յ Ո Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն Կ Ի Լ Ի Կ Ի Լ Յ ՈՒ Մ

6. Հ Ա Յ Ո Ց Ե Կ Ե Ղ Ե Ց ՈՒ Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Մ Ը
Կ Ի Լ Ի Կ Յ Ա Ն Հ Ա Յ Ա Ս Ա Ն ՈՒ Մ

Հայոց եկեղեցու կառույցների ձևավորումը

Բագրատունյաց թագավորության անկումից առաջ և հետո հայ ազգաբնակչությունը զանգվածաբար արտագաղթում էր դեպի Արևմուտք: Հայության մի ստվար հատված էլ հաստատվեց Վրաստանում: Այս տեղաշարժերի պատճառով էապես փոխվեց հայ ժողովրդի տեղաբաշխման պատկերը:

Բյուզանդիան, շարունակելով իր ավանդական քաղաքականությունը, ցանկանում էր Փոքր Ասիայում հաստատված հայ բնակչությանը դարձնել քաղկեդոնական:

Ստեղծված պայմանները նոր, բարդ խնդիրներ դրեցին Հայոց եկեղեցու առջև: Առաջին հերթին անհրաժեշտ էր գործնական քայլեր ձեռնարկել Մեծ Հայքից դուրս գտնվող հայերի ազգային նկարագիրը պահպանելու համար:

Տարագիր հայերի կրոնական ինքնուրույնությունը, կենցաղը և մշակութային կյանքը կազմակերպելու համար բնակության նոր վայրերում կառուցվում էին հայկական եկեղեցիներ և վանքեր: Ստեղծվում էին եկեղեցական համայնքներ, որոնք միավորվում և կազմում էին եպիսկոպոսական թեմեր: XI դարի երկրորդ կեսին Հայոց եկեղեցու նոր թեմեր ստեղծվեցին Ասորիքում, Կիլիկիայում և Կապադոկիայում:

Այսպիսով՝ հայության տեղաշարժերի պատճառով ընդարձակվում էին նաև **Հայոց եկեղեցու գործունեության և ազդեցության սահմանները:**

Այս բնագավառում Հայոց կաթողիկոսությանը գործունե աջակցություն էին ցույց տալիս տարածաշրջանում հաստատված հայ իշխանները: Իրենց ստեղծած իշխանություններն ամրապնդելու և դրանց շուրջ հայ բնակչությանը համախմբելու գործում նրանք զգում էին Հայոց եկեղեցու կարիքը: Ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ առանձին իշխաններ իրենց





տարածքներում փորձում էին հաստատել ինքնուրույն պետականություն:

Փաստորեն Հայոց եկեղեցին ընդգրկվեց հայկական պետականության վերականգնման գործընթացներում:



Հայրապետական աթոռի հաստատումը Հռոմկլայում

1105 թ. Գրիգոր Բ Վկայասերն իր մոտ է հրավիրում աթոռակից Բարսեղ Անեցուն և նրան հանձնում հայրապետական իշխանությունը: Բարսեղ Ա Անեցին (1105-1113) թողնում է Անին և հաստատվում **Շուղրի Կարմիր վանքում***, որը գտնվում էր այդ ժամանակաշրջանի ամենագորեղ հայկական իշխանություններից մեկի՝ Գող Վասիլի իշխանության մայրաքաղաք Քեսունի մոտակայքում: Բարսեղ Անեցին միավորված աթոռը չի տեղափոխում Հայաստան, որովհետև կաթողիկոսական աթոռը միշտ աշխատում էր գտնվել հայոց քաղաքական կյանքի կենտրոնում: Այս ժամանակ հայ եկեղեցական և քաղաքական ուժերը փորձում էին ամրանալ Փոքր Ասիայի հարավ-արևելքում, ուր հավաքվել էր մեծաքանակ հայ բնակչություն: Այս տարածքների համար պայքար էր սկսվել նաև խաչակիրների և մահմեդականների միջև:

1113 թ. Կարմիր վանքում գումարված եկեղեցական ժողովը կաթողիկոս է ընտրում Գրիգոր Բ Վկայասերի եղբոր թոռ **Գրիգոր Գ Պահլավունուն (1113-1166)**: Պատճառաբանելով նորընտիր կաթողիկոսի երիտասարդ տարիքը (նա 20 տարե-



կան էր) և կաթողիկոսական աթոռի Հայաստանից դուրս գտնվելը՝ Աղթամարի Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսը Աղթամար կղզում ստեղծում է հակաթոռ* կաթողիկոսություն, որի իրավունքները տարածվում էին միայն Վան քաղաքի շրջակայքում:

Գող Վասիլի իշխանության քայքայումը ստիպում է Գրիգոր Գ-ին հայրապետական աթոռը տեղափոխել Ծոփք, որտեղ այն մնում է 33 տարի: Շուտով Հայոց կաթողիկոսը խաչակիրներից գնում է Եփրատի ափին գտնվող **Յոռնկլա** ամրոցը և **1149 թ. հայրապետական աթոռը տեղափոխում այնտեղ**: Յոռնկլան, ինչպես ժամանակին Շուղրի Կարմիր վանքը, ոչ միայն աթոռանիստ էր, այլև ուսումնագիտական և եկեղեցական խոշոր կենտրոն, որը հաջողությամբ կազմակերպում էր տարբեր վայրերում ապրող հայության մշակութային և կրոնական կյանքը:



Գրիգոր Գ Պաղևադունի

Կաթողիկոսների ընտրության նոր կարգը

Դավիթ Աղթամարցու գործունեությունը ստիպում է 1114 թ. Շուղրի Կարմիր վանքում հրավիրել ժողով: Ժողովին ներկա են եղել 2500 հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան գործիչներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Հայաստանից դուրս գտնվող մեծաքանակ հայ բնակչություն ունեցող շրջաններից: Ժողովը դատապարտում է Դավիթ Աղթամարցու գործունեությունը և բանադրում* հակաթոռ կաթողիկոսությունը: Ժողովը հաստատում է նաև Հայոց կաթողիկոսի ընտրության նոր կարգ: Թեև հայրապետական աթոռը մնում է Մեծ Հայքից դուրս, սակայն կաթողիկոսի ընտրությունը պետք է կատարվեր Հայաստանի մշամավոր չորս եկեղեցական աթոռների համաձայնությամբ: Դրանք էին **Բջնիի, Հաղպատի, Արտազի** և **Տաթևի** արքեպիսկոպոսությունները: Այս կանոնը նպատակ ուներ հետագայում կաթողիկոսների ընտրությունները հնարավորին չափ հեռու պահել աշխարհիկ իշխանությունների միջամտություններից:



ԿԻՆԼԻԿՅԱՆ ԱՐՔՈՆՆԻՔԻ և Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները



Նոր Կտակարանի ոսկեգօծ կազմ.
Կինկիսա

Կինկիսայում հաստատված Ռուբինյանները շատ չանցած վերականգնում են Հայոց պետականությունը: Այդ ժամանակ արդեն Հայոց եկեղեցու թեմական կառույցը հիմնականում համապատասխանում էր նորաստեղծ Կինկիսյան Հայաստանի վարչական տարածքին: Եկեղեցական թեմերից առավել նշանավոր էին Սսի, Տարսունի, Անավարզայի, Լամբրոնի և Մամեստիայի աթոռները: Հայոց եկեղեցին միակ կառույցն էր, որ հայությանը համախմբեց իր շուրջ և նպաստեց պետության վերականգնմանը: Սակայն Կինկիսյան արքունիքի և հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները միշտ չէ, որ խաղաղ էին:

Ռուբինյանները, ի վերջո, իրենց հիմնադրած իշխանությունը հռչակեցին թագավորություն, սակայն նրանց քաղաքական գերիշխանությունը տարածվում էր միայն Կինկիսայում: Այս դեպքում

նրանց վարած արտաքին և ներքին քաղաքականությունը հիմնականում համապատասխանում էր Կինկիսյան Հայաստանի շահերին: Որոշ դեպքերում Կինկիսիայի հայոց թագավորները փորձում էին լուծել նաև բուն Հայաստանում և Փոքր Ասիայում ապրող իրենց հայրենակիցների խնդիրները, սակայն միշտ չէ, որ դա նրանց հաջողվում էր:

Այլ էր Հռոմկլայի Հայոց կաթողիկոսության վիճակը, որը շարունակում էր մնալ որպես միակ համահայկական կենտրոն: Հայոց կաթողիկոսությունը սովորաբար աշխատում էր վարել այնպիսի քաղաքականություն, որն արտահայտեր ողջ հայության շահերը: Ահա թե ինչու Հռոմկլայի Հայոց կաթողիկոսները որդեգրեցին **«Ամենայն Հայոց կաթողիկոս»** տիտղոսը:

Կինկիսյան Հայաստանի ամենավտանգավոր հարևանները մահմեդական երկրներն էին: Արևմտյան Եվրոպան և Բյուզանդիան Կինկիսիային ռազմական օգնություն ցույց տալու համար պահանջում էին, որպեսզի Հայոց եկեղեցին դավանաբանական և ծիսական հարցերում զիջումներ կատարեր հռոմեական կամ հունական եկեղեցիներին: Դիվանագիտական նկատառումներով Կինկիսյան արքունիքը



ստիպված էր լինում երբեմն ընդառաջ գնալ այս պահանջներին: Մյուս կողմից Կիլիկիայում ապրում էին մեծ թվով հույներ և եվրոպացիներ, ովքեր զգալի դեր էին խաղում երկրի ռազմական ու քաղաքական կյանքում, ուստի իշխանությունները չէին կարող հաշվի չառնել նաև նրանց շահերը: Այս պատճառով է, որ Կիլիկյան արքունիքը փորձում էր վերահսկողություն սահմանել Հայոց կաթողիկոսության գործունեության նկատմամբ:

Խառնակ ջրջան

1203 թ. Գրիգոր Զ Ապիրատի մահով ավարտվեց Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանությունը: Կիլիկյան արքունիքի առաջարկով կաթողիկոս ընտրվեց Սսի Հովհաննես արքեպիսկոպոսը:

Մի քանի քաղաքական-կրոնական բաժանումներից ու անհամաձայնություններից հետո Հռոմկլայի Հայոց կաթողիկոսությունը վերականգնում է իր իրավունքները: Այս դեպքերից հետո կարգավորվում են նաև Հայոց կաթողիկոսության և արքունիքի փոխհարաբերությունները:



Պատկերազարդ էջ Հռոմկլայի Ավետարանից, 1251 թ.



Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս փոխվեց հայ ժողովրդի տեղաբաշխման պատկերը XI դարում:
Որտե՞ղ հաստատվեցին արտագաղթած հայերը:
2. Ի՞նչ գործնական քայլեր ձեռնարկեց Հայոց եկեղեցին Մեծ Հայքից դուրս գտնվող հայերի ազգային նկարագիրը պահպանելու համար:
3. Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին Մեծ Հայքից դուրս ապրող հայ իշխաններն աջակցում Հայոց եկեղեցուն:
4. XI դարի երկրորդ կեսին որտե՞ղ ստեղծվեցին Հայոց եկեղեցու թեմեր:
5. Ո՞ւր տեղափոխեց Բարսեղ Ա Անեցին կաթողիկոսական աթոռը:
6. Հայոց կաթողիկոսի ընտրության նոր կարգը ե՞րբ և ո՞ր ժողովում հաստատվեց:
Ինչպե՞ս էր այդուհետ ընտրվելու նոր կաթողիկոսը:
Ինչպե՞ս կազմավորվեց Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցը Կիլիկյան Հայաստանում: Տեղի թեմերից որո՞նք են առավել նշանակալից դեր խաղացել:
7. Ինչպիսի՞ համապատասխանություն կար Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և եկեղեցական վարչական բաժանման միջև:
8. Ինչպիսի՞ն էին Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները:
9. Ինչո՞ւ Հռոմկլայի Հայոց կաթողիկոսներն ընդունեցին «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը:
10. Ներկայացրե՛ք Կիլիկիայում հայոց պետականության ստեղծման գործում եկեղեցու խաղացած դերը:

Ք ն ն ա ր կ ու մ

1. Ճի՞շտ վարվեց արդյոք Բարսեղ Անեցին՝ կաթողիկոսական աթոռը Հայաստանից դուրս տեղափոխելով: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
2. Գնահատե՛ք Աղթամարի Դավիթ եպիսկոպոսի գործունեությունը:

Բ առ ա ր ա ն

Շուրդրիի Կարմիր վանք – Գտնվում է Քեսուն քաղաքի մոտ: Քեսունը Գող Վասիլի իշխանության կենտրոնն էր:

Հակաթոռ – Քաղաքական կամ այլ պատճառներով եկեղեցու ներսում ստեղծված ապօրինի կաթողիկոսական աթոռ:

Բանադրել – Անջատել, դատապարտել. կիրառվում է եկեղեցու և նրա կարգի դեմ օրինազանց գործունեության և անհնազանդության դեպքում:



7. ՀԱՅ-ՀՈՒՄԵԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունները

Հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունների սկզբնավորումը կապված է խաչակրաց առաջին արշավանքների հետ: XI դարի վերջին խաչակրաց զինված ջոկատներն Արևելք էին արշավել Երուսաղեմում գտնվող Հիսուս Քրիստոսի գերեզմանը մահմեդականներից ազատագրելու համար:

Մահմեդականության դեմ մղվող պայքարում Կիլիկյան Հայաստանը օգնության համար հաճախ դիմում էր Հռոմի պապին: Վերջինս ռազմական օգնություն տրամադրելու դիմաց սովորաբար առաջարկում էր, որպեսզի հայերը դավանափոխ լինեին և ընդունեին պապի գերագահությունը:

Այդ ժամանակաշրջանի հայ-հռոմեական եկեղեցական հարաբերություններում քննարկվում են նաև Կիլիկյան Հայաստանը թագավորություն ճանաչելու և Լևոն II Ռուբինյանին թագադրելու խնդիրները: Հռոմեական սրբազան կայսրության (Գերմանիա) և Բյուզանդիայի կայսրերը Լևոնին ճանաչել էին որպես Հայոց թագավոր:



Լևոն Ա Մեծագործ

Լևոն II-ը ի վերջո կարողանում է համոզել Հռոմի պապին: 1198 թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքում Լևոնը թագադրվում է Հռոմի պապի ներկայացուցչի ձեռքով և օծվում Հայոց կաթողիկոսի կոչմից: Թագադրումից հետո նա կամենում էր նվաճել Անտիոք քաղաքը և այն դարձնել նաև Հայոց եկեղեցու թեմերից մեկը: Պատճառն այն էր, որ անցյալում Անտիոքի կաթոլիկ պատրիարքներն իրենք էին կամենում կաթոլիկ դարձնել Կիլիկյան Հայաստանը և Հայոց եկեղեցին: Այս պայքարում նշանավոր դեր խաղաց նաև ժամանակի անվանի մատենագիր ու աստվածաբան Ներսես Լամբրոնացին: Ճիշտ է, որոշ ժամանակ հայերին հաջողվեց գրավել Անտիոքը, սակայն Հայոց կաթողիկոսության և Անտիոքի կաթոլիկ պատրիարքության պայքարը շարունակվեց մինչև XIII դ. կեսերը:



Հայ և բյուզանդական եկեղեցիների միավորման խնդիրը



Ս. Ներսես Շնորհալի

Ռուբինյան իշխանության հաստատումից հետո հայերը սուր պայքարի մեջ մտան Բյուզանդիայի հետ: Վերջինս չկարողանալով զենքի ուժով վերանվաճել Կիլիկիան, փորձում էր քաղվեղոնական դարձնել Հայոց եկեղեցին և այդպիսով վերադարձնել Կիլիկիան:

Այսպիսի ընդհարումներ թույլ չտալու և Կիլիկիայում ապրող հայերի և հույների միջև խաղաղություն հաստատելու համար Գրիգոր Գ կաթողիկոսի հանձնարարությամբ նրա կրտսեր եղբայր Ներսես Շնորհալին 1165 թ. բանակցություններ է սկսում Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատարի հետ: Վերջինս խնդրում է պատասխանել Հայոց եկեղեցու դավանաբանությանը վերաբերող մի քանի հարցերի, որոնք հետաքրքրում էին հույն հոգևորականներին: Ստանալով այդ հարցերի պատասխանները՝ հույն իշխանը Ներսես Շնորհալու գրությունն ուղարկում է **Սանուել** I կայսրին: Բյուզանդիայի կայսրը բանակցությունների համար իր

մոտ է հրավիրում Շնորհալուն: Այդ ժամանակ է, որ Գրիգոր Գ կաթողիկոսը ծերության և վատառողջության պատճառով կաթողիկոսական գահը հանձնում է եղբորը՝ Ներսես Դ Շնորհալուն (1166-1173):

Նա այլևս չի մեկնում Կ.Պոլիս, սակայն հայ-բյուզանդական եկեղեցական երկխոսությունը շարունակվում է:

Հայ-բյուզանդական եկեղեցական միության համար Բյուզանդիան հայերին առաջարկում է ընդունել Քրիստոսի երկու բնության վարդապետությունը, ինչպես նաև Հայոց կաթողիկոսի ընտրության հաստատումը բյուզանդական կայսեր կողմից:

Ներսես Շնորհալին պատասխանում է, որ ինքն առանց ազգային-եկեղեցական ժողովի հավանության իրավասու չէ նման խնդիրներ լուծել: Սակայն խոստացված ժողովը չի գումարվում, քանզի կաթողիկոսը շուտով մահանում է:

Հռոմկլայի եկեղեցական ժողովը

Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները շարունակվեցին նաև Ներսես Շնորհալուն հաջորդած **Գրիգոր Դ Տղա** կաթողիկոսի օրոք (1173-1193), ով նույնպես եկեղեցիների մերձեցման կողմնակից էր: Այդ մերձեցման մեջ տարբեր եկեղեցիներ պետք է ունենային հավասար իրավունքներ, այլ ոչ թե մեկը ենթարկվեր



մյուսին: Այս պատճառով Գրիգոր Տղա կաթողիկոսը հրաժարվում է ընդունել բյուզանդացիների պահանջները: Բյուզանդացիներին պատասխան տալու համար Գրիգոր Դ կաթողիկոսը **1178 թ.** հրավիրում է **Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը**: Ժողովին մասնակցում էին Սեծ Հայքի, Կիլիկյան Հայաստանի և շրջակա եկեղեցիների եպիսկոպոսները, ինչպես նաև Աղվանից կաթողիկոսը:

Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները և Հռոմկլայի ժողովը պարզորոշ ցույց տվեցին, որ Ներսես Շնորհալին և նրա կողմնակիցներն ու հաջորդները քրիստոնեական եկեղեցիների միությունը պատկերացնում էին այլ կերպ, քան բյուզանդացիները: Հայոց եկեղեցու առաջնորդները միությունը պատկերացնում էին որպես իրավահավասար եկեղեցիների միավորում: Նրանք հանդուրժողական վերաբերմունք ունեին Կիլիկյան Հայաստանում գտնվող ասորական, հունական և հռոմեական եկեղեցիների նկատմամբ:

Այնինչ Բյուզանդիան եկեղեցական միության պատրվակով ուզում էր իրեն ենթարկել Կիլիկյան Հայաստանը և Հայոց եկեղեցին: Բյուզանդիայի հետ հարաբերությունները և եկեղեցական երկխոսությունը վերսկսվեցին Լևոն II-ի ժամանակ: Նրա պատվիրակությունը գլխավորում էր Ներսես Լամբրոնացին: Չնայած եկեղեցու հարաբերությունները և երկխոսությունը հաջողությամբ չպսակվեցին, սակայն բյուզանդական կայսրը ստիպված եղավ ճանաչել Հայոց թագավորությունը և թագ ուղարկել Լևոն II-ին:





Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են սկզբնավորվել հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունները: Ո՞ր իրադարձության հետ է այն կապված:
2. Կիլիկյան Հայաստանին օգնելու դիմաց ի՞նչ պահանջ էր դնում Հռոմի պապը:
3. Ե՞րբ տեղի ունեցավ Լևոն II-ի թագադրումը: Ի՞նչ փոխհամաձայնությամբ կատարվեց այն:
4. Ո՞ր հարցի շուրջ համընկան Հայոց կաթողիկոսության և Լևոն II-ի ծրագրերը:
5. Կիլիկիայում իր ազդեցությունը չկորցնելու համար ի՞նչ ձեռնարկեց Բյուզանդիան XII դարի կեսերին:
6. Ի՞նչ էր առաջարկում Բյուզանդիան հայ-բյուզանդական եկեղեցական միության համար:
7. Ի՞նչ դեր է խաղացել Ներսես Շնորհալիին հայ-բյուզանդական երկխոսության մեջ:
8. Ե՞րբ և ինչո՞ւ հրավիրվեց Հռոմկլայի ժողովը: Ի՞նչ որոշում է կայացրել այն:
9. Ե՞րբ վերսկսվեցին հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները: Ինչո՞վ ավարտվեցին Ներսես Լամբրոնացու բանակցությունները Կ.Պոլսում:

Ք ն ն ա ր կ ու մ

Ինչո՞ւ սրվեցին հարաբերությունները Հայոց կաթողիկոսության և Անտիոքի պատրիարքության միջև: Վերհանե՛ք այդ հակամարտության պատճառները:

Եկեղեցիների միավորման հարցի շուրջ հայոց եկեղեցաքաղաքական շրջաններում ձևավորվեցին երկու ուղղություններ: Ձեր կարծիքով, ո՞ր ուղղությունն էր ավելի ճիշտ: Հիմնավորե՛ք ձեր կարծիքը:



Հայ ասպետ Կիլիկիայում



Լրացուցիչ նյութ

Լևոն II-ի թագադրությունը

Եվ Հռոմի թագավորն ու պապը ուղարկում են նախկին թագավորների մի թանկարժեք թագ ու մի... արքեպիսկոպոսի, որպեսզի թագադրի նրան և երեք բան պահանջի նրանից՝ Տիրոջ ու բոլոր սրբերի տոնը տոնել որ օրը որ հանդիպի, ցերեկվա ու գիշերվա աղոթքները միշտ եկեղեցում անել, որ արաբական ավազակահեծության պատճառով վաղուց ի վեր հայերը չէին անում, բացի միայն Սուրբ պատարագի խորհրդածության ժամանակից. ծննդյան ու հարության ծրագալույցը (ծրագալույցի պասը) չլուծել այլ կերպ, քան միայն ձկնով ու ձեթով:

Իսկ Լևոնը կանչում է կաթողիկոսին ու եպիսկոպոսներին և հարցնում է, թե հռոմեացիների պատգամին ինչ պատասխան տա: Նրանք չեն համաձայնվում առաջարկն ընդունել: Լևոնը նրանց ասում է. «Դրա մասին հոգ մի՛ տանեք, ես նրանց այս անգամ կեղծավորությանը կզոհացնեմ» ...



Լևոն Ա Մեծագործ

Ապա զորապետների ու զորքերի, ազգերի ու ցեղերի խիստ մեծ բազմություն հավաքվեց. (եկավ) Տարսնում նստող հունաց պատրիարքը, Մելիտիների սահմաններում գտնվող Սուրբ Պարսունայի վանքում նստող ասորիների կաթողիկոսն ու Հայոց կաթողիկոսը բոլոր եպիսկոպոսներով և թագավորեցրին Լևոնին, իսկ շրջակա ազգերը ընծաներ բերին թագադրված նորոգ թագավորին:

Եվ հունաց կայսրը, լսելով, որ ֆրանկները թագ տվին Լևոնին, նա էլ ընծաներ, ոսկով ու թանկագին ակներով ընդելուզված գեղեցիկ թագ ուղարկեց ու ասաց. «Հռոմեացիների թագը մի՛ դնիր քո գլուխը, այլ մերը դիր, որովհետև մեզ ավելի մոտիկ ես, քան Հռոմին»: Իսկ Լևոն թագավորը իմաստուն մարդ էր, երկու թագավորներից ոչ մեկին էլ չմերժեց՝ ոչ Հռոմինը և ոչ էլ Կոստանդնուպոլսինը...

Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու Աստծու սպասավորների նկատմամբ սիրալիր: Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում ու բազմացնում էր նրանց պիտույքները, որպեսզի մարմնավոր պետքերից ոչ մի բանի կարիք չզգան, այլ որ միայն աղոթքներով ու արարողություններով զբաղվեն: Նրա հաստատած վանքերից մեկն էր Ակներ կոչված հռչակավոր վանքը:

Կիրակոս Գանձակեցի. Հայոց պատմություն



Ս. Ներսես Դ Շնորհալի



Ս. Ներսես Դ Շնորհալի

Նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ. Թեոքրա անունով մի կուստանդնուպոլսեցի իմաստասեր լսելով սրա հռչակը՝ իր գրքերը բառնալով գրաստների վրա, եկավ փորձելու և վերահասու լինելու նրա իմաստությամբ: Եկավ շատ օրեր զրուցեց նրա հետ ու գտավ ամեն բանի մեջ հմուտ, նաև Սուրբ Հոգով լցված: Եվ երբ գնաց Կոստանդնուպոլիս քաղաքը, հարցրին նրան, թե «Ինչպե՞ս էր լուրը, ճի՞շտ էր, թե՞ ոչ»: Նա ասում է. «Ինչպես լսեցիք, այնպես էլ տեսանք. քանի որ նոր ոմն Գրիգորիս Աստվածաբան է հարուսթյուն առել»: Եվ ամենքին զարմացնում էր նրանով:

Եվ որովհետև նա հանձարեղ մարդ էր, շատ բան կարգավորեց եկեղեցիներում քաղցր եղանակով. (օրինակ)՝ խոսրովյան ոճով շարականներ, տաղեր ու ոտանավորներ:

Նա քաղցր եղանակով գրեց Սուրբ պատարագի քարոզը, նույն խոհականությամբ՝ շարականների տները, իր անվան տառերով երկու գանձեր՝ մեկը «Վարդավառի», մյուսը «Աստվածածնի փոխման»:

Կիրակոս Գանձակեցի. Հայոց պատմություն



8. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՋԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սելջուկյան արշավանքների և նվաճումների ժամանակաշրջանում Հայոց եկեղեցու բնականոն կյանքը խախտվել էր: Ազատագրված տարածքներում Ջաքարյանները վերականգնում էին Հայոց եկեղեցու իրավունքները: Նոր պայմաններում եկեղեցին աշխատում էր թեմական կառույցը հարմարեցնել Ջաքարյանների իշխանապետության վարչական բաժանմանը: Իրենց իրավունքները վերականգնեցին Անիի, Սյունիքի, Դվինի թեմերը: Այս ժամանակ էր, որ փորձ արվեց նաև կաթողիկոսական աթոռը վերահաստատել Հայաստանում, և կաթողիկոս ընտրեցին **Քարսեղ Բ Անեցուն**: Սակայն նրա մահից հետո Ջաքարե Ջաքարյանը թույլ չտվեց նոր կաթողիկոս ընտրելու: Դա նշանակում էր, որ Ջաքարյան Հայաստանում գտնվող եկեղեցական թեմերը ենթարկվում էին հռոմկլայի Հայոց կաթողիկոսությանը:



Ջաքարե և Իվանե Ջաքարյանների բարձրաքանդակը



Եսայի Նչեցի

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՂԱՆՐ- ՄՉԱԿՈՒՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒՔՅՈՒՆՆԸ

Ջաքարյան Հայաստանում Հայոց եկեղեցու կարևորագույն խնդիրներից մեկը հայության ինքնուրույն կյանքի կազմակերպումն էր: Այս նպատակով կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ և վանական համալիրներ, որոնցից աչքի ընկնող դեր խաղացին **Այրիվանքը** (Գեղարդավանք), **Գոշավանքը**, **Նորավանքը**, **Կեչառիսը**: Այս գործում Հայոց եկեղեցուն մեծ օգնություն ցույց տվեցին Ջաքարյանները և նրանց ենթակա նախարարական տները՝ Օրբելյանները, Պռոշյանները, Վաչուտյանները: Նախարարների և եկեղեցու համատեղ ջանքերով ստեղծվեցին բազմաթիվ ուսումնագիտական կենտրոններ, որոնցից կարևոր




նշանակություն ունեցան **Հաղպատի, Սանահինի, Հաղարծինի, Խոր Վիրապի** վանքերը: Միջնադարյան Հայաստանի ուսումնագիտական կենտրոնների շարքում նշանակալից էր **Գլաձորի համալսարանի** դերը: Գլաձորի համալսարանն իր կրթական ծրագրերով գերազանցեց ինչպես Հայաստանի, այնպես էլ Կիլիկյան Հայաստանի ուսումնագիտական մյուս բոլոր կենտրոններին:

Այս և մյուս ուսումնագիտական կենտրոններում են գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվել **Մխիթար Գոշը, Գրիգոր Տուտեորդին, Դավիթ Քորայրեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Ստեփանոս Օրբելյանը, Եսայի Նչեցին** և ուրիշներ:

Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի եկեղեցական հարաբերությունները

Ռազմական երթերի և պատերազմական գործողությունների ժամանակ վրացական բանակում պատարագը մատուցում էին շարժական սեղանի վրա: Հայերի մոտ այդ սովորությունը չկար: Պատարագի համար շարժական սեղան ունենալու և հայվրացական եկեղեցական առանձին տարածայնություններ կարգավորելու նպատակով Ջաքարե ամիրսպասալարը դիմում է Հովհաննես Ջ կաթողիկոսին և Լևոն II թագավորին: **1203 թ.** Սիս քաղաքում գումարվում է եկեղեցական ժողով: Հովհաննես կաթողիկոսը Ջաքարեին ուղարկում է պատարագի համար նախատեսված վրան և մարմարե շարժական սեղան:



Գոշավանք



Արևելյան Հայաստանի բազմաթիվ վարդապետներ, որոնց գլխավորում էին Հաղպատի և Սանահինի վանքերի վանահայրեր **Դավիթ Քոբայրեցին** և **Գրիգոր Տուտեղորդին**, հրաժարվում են ընդունել Սսի ժողովի որոշումները: Ջաքարե ամիրսպասալարը ստիպված է լինում Լոռիում, ապա Անիում ժողովներ հրավիրել, որպեսզի օրինականացնի իր առաջարկները: Սակայն նրա ջանքերը ապարդյուն են անցնում:



Հայ-վրացական եկեղեցական վեճերը շուտով մեղմացան, որովհետև սկսվեցին մոնղոլական աշխարհավեր արշավանքները: Հայ-վրացական ուժերը պատրաստվում են միասին դիմագրավելու այս նոր աղետին:

Մոնղոլական տիրապետության հաստատումը Հայաստանում ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար:

Հայոց եկեղեցու համար այս ժամանակաշրջանում նոր մարտահրավեր դարձան մոնղոլական արշավանքները: Բանն այն է, որ Հայոց եկեղեցին այդ ընթացքում ներկայացնում էր Կիլիկյան Հայաստանի և Ջաքարյան Հայաստանի երկու ստվար հատվածների հայ բնակչությունը: Մոնղոլները 1236-1254 թվականներին նվաճեցին գրեթե ողջ Արևելյան Հայաստանը և, 1254 թվականին հասնելով Կիլիկյան Հայաստանի սահմաններին, դաշնակցային պայմանագիր կնքեցին Հայոց Հեթում I թագավորի հետ: Հայոց թագավորին այս հարցում մեծապես օգնում էին հայ եկեղեցականները, քանի որ թագավորի և մոնղոլ Մանգու խանի միջև կնքված պայմանագրի 1, 2 և 4-րդ կետերը վերաբերում էին Հայ եկեղեցուն և քրիստոնեական հավատին մոնղոլական տերության մեջ: Հայոց թագավորը Մանգու խանին նույնիսկ առաջարկել էր մկրտվել ու դառնալ քրիստոնյա՝ ավելի ամրապնդելու համար հայ-մոնղոլական բարեկամական հարաբերությունները: Հեթում I-ի կնքած պայմանագրի շնորհիվ Հայ եկեղեցին որոշ ժամանակ ազատություն ստացավ և հարկեր չվճարեց Ջաքարյան Հայաստանում ու մոնղոլների նվաճած տարածքներում:



Հեթում I-ի հանդիպումը
մոնղոլների հետ

Սսի եկեղեցական ժողովը

Ստեղծված նոր պայմաններում **1243 թ. Սսում** Հեթում I թագավորը և **Կոստանդին Ա Բարձրբերդցի** կաթողիկոսը (1221-1267) հրավիրում են ժողով: Ժողովն ընդունում է 24 կանոններ, որոնք վերաբերում էին հավատացյալների հոգևոր կյանքի ճիշտ կազմակերպմանը և կրոնական կենցաղին: Չնայած ժողովին մասնակցել էին միայն Կիլիկյան Հայաստանի և շրջակա եկեղեցիների հոգևորականները, սակայն որոշումներն ընդունվել էին ողջ հայության համար, ուստի ընդունված կանոններն ուղարկում են մահ Մեծ Հայք:

Այդ ժամանակ ևս Հայոց եկեղեցու թեմերի մեծագույն մասը համախմբված էր Հռոմկլայի կաթողիկոսության շուրջ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք, թե ինչպես ստեղծվեց Ջաքարյանների իշխանությունը:
2. Ինչո՞ւ Ջաքարե իշխանը թույլ չտվեց Բարսեղ Ա Անեցուց հետո նոր կաթողիկոս ընտրել:
3. Ո՞րն էր Հայոց եկեղեցու կարևորագույն խնդիրը Ջաքարյան Հայաստանում:
4. Ի՞նչ նշանավոր եկեղեցիներ և վանքեր կառուցվեցին Ջաքարյան Հայաստանում:
5. Ստեղծված ուսումնագիտական կենտրոններից որո՞նք էին առավել հայտնի: Նշե՛ք այդ կենտրոններում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղված մի քանի գործիչների անունները:
6. Ծիսական ի՞նչ կանոններ ընդունեց 1203 թ. Սսի եկեղեցական ժողովը:

Ք ն ն ա ր կ ու մ

1. Ինչո՞ւ սրվեցին հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները: Որո՞նք էին դրա պատճառները:
2. Ինչո՞ւ Ջաքարե իշխանին չհաջողվեց Արևելյան Հայաստանում օրինականացնել Սսի 1203 թ. ժողովի որոշումները:



Լրացուցիչ նյութ

Մխիթար վարդապետ Գոշի մասին

Գիտությամբ հռչակված այս մարդը Գանձակ քաղաքից էր, քրիստոնյա ծնողների զավակ, որոնք նրան տվեցին Սուրբ Գրքի ուսման: Իսկ երբ չափահաս դարձավ. ձեռնադրվեց կուսակրոն քահանա: Երկար տարիներ իբրև կուսակրոն քահանա ծառայելով՝ կամեցավ նաև հմտանալ Սուրբ Գրքի ուսման և առակների մեկնության մեջ: Բազմաթիվ վարդապետների մոտ ուսանելով՝ ստացավ վարդապետական աստիճան, բայց, դրանով չբավարարվելով, գնաց Կիլիկիա՝ Սև լեռ կոչված վանքը, որտեղ բազմաթիվ ուսուցիչներ ու վարդապետներ էին ապրում: ...Ուսումն ավարտելուց հետո նա Կայեն գավառում՝ Աղստև գետի ափին հիմնեց Գետիկի վանքը: ...Շուտով վանքը փլվեց երկրաշարժի պատճառով, և երանելի վարդապետն իր աշակերտների հետ Տանձուտի ձոր կոչված վայրում հիմնեց Նոր Գետիկի վանքը, որն անվանեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով:

Կիրակոս Գանձակեցի. Հայոց պատմություն




Մխիթար Գոշ.
քանդակագործ Ղուկաս Չուբարյան



9. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Հայրապետական աթոռի հաստատումը Սսում



Սիս. Ս. Սոֆիա եկեղեցու ավագ խորանը

XIII դ. երկրորդ կեսին վերսկսվեցին բանակցությունները քրիստոնեական եկեղեցիների միավորման համար: Այս անգամ նման նախաձեռնությամբ հանդես եկավ Հռոմի կաթոլիկ եկեղեցին: Հզորացող Եգիպտոսի սուլթանությունը, համախմբելով Մերձավոր Արևելքի մուսուլմանական երկրների մեծ մասը, մեկը մյուսի հետևից գրավում է խաչակրաց տիրույթները և սպառնում Կիլիկյան Հայաստանին: Պապականության փորձերը՝ Բյուզանդիայի, Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների միջոցով ստեղծել հակաեգիպտական դաշինք, ձախողվում են:

1292 թ. եգիպտական մամլուքները գրավեցին Հռոմկլա կաթողիկոսանիստ ամրոցը: Նրանք գերեցին նաև Ստեփանոս Դ Հռոմկլայեցի կաթողիկոսին, ով մահացավ գերության մեջ: Այդ ժամանակ Հեթում II թագավորը որոշեց հայրապետական աթոռը մամլուքների կողմից ավերված Հռոմկլայից տեղափոխել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք Սիս: Առանց ազգային-եկեղեցական

ժողով գումարելու, թագավորի հրամանով կաթողիկոս ձեռնադրվեց կաթոլիկություն ընդունելու կողմնակից Գրիգոր Է Անավարզեցին:

XIII դ. վերջին Կիլիկյան Հայաստանի համար ստեղծվել էր բավական ծանր իրավիճակ: Եգիպտոսի սուլթանությունը գրավեց խաչակիրների վերջին տիրույթները և ընդհուպ մոտեցավ Կիլիկյան Հայաստանի սահմաններին: Ռազմաքաղաքական հզորությունը կորցրած մոնղոլներն այլևս անկարող էին օգնել Կիլիկիային: Այս պայմաններում ռազմական օգնություն ստանալու միակ հույսը կապվում էր Արևմուտքի քրիստոնյա երկրների հետ:



Պայքար եկեղեցիների միավորման փորձերի դեմ

Պապականությունից և Բյուզանդիայից օգնություն ստանալու ակնկալությամբ Հեթում II թագավորն ու Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսն անհեռատեսորեն նրանց խոստանում էին զիջումներ կատարել և փորձում Հայոց եկեղեցուն ծիսական և դավանաբանական որոշ փոփոխություններ կատարել: Սակայն այս փորձերը հանդիպեցին Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի հոգևորականության լուրջ դիմադրությանը: Հայաստանում ընդդիմությունը գլխավորում էր Սյունյաց թեմի մետրոպոլիտը՝ **Ստեփանոս Օրբելյանը**: Սյունյաց թեմի առաջնորդը **Նորավանքում** բարձրաստիճան հոգևորականների ու իշխանների համատեղ ժողով է գումարում և մի ընդարձակ որոշումով մերժում դավանափոխության առաջարկը: Ժողովը մեկ անգամ ևս շեշտում է հայոց դավանանքը՝ «միավորյալ մի բնություն»՝ բանաձևը:



Նորավանք

Հայոց եկեղեցական և քաղաքական գործիչների մեծ մասը շատ լավ հասկանում էր դավանափոխության առաջարկությունների հետ կապված կրոնական, ազգային ու քաղաքական վտանգը: Հայոց եկեղեցու մշակած ծիսական և դավանաբանական կանոնները արմատավորվել էին հայ ժողովրդի մեջ և ավանդույթի ուժ ստացել: Սյուն կողմից **միանություն էր կարծել, թե հայ ժողովրդի դավանափոխ լինելու դեպքում եվրոպական երկրները նոր խաչակրաց արշավանք կսկսեին Կիլիկիային օգնելու համար**: Այնուամենայնիվ, կաթոլիկ Ֆրանցիսկյան միաբանությանը հարած Հեթում II թագավորը 1307 թ., երբ արդեն մահացել էր Գրիգոր Անավարզեցին, մի քանի համախոհ հոգևորականների հետ Սիսուն ժողով է գումարում: Ժողովը որոշում է ընդունել Քաղկեդոնի դավանանքը, հայոց ծեսերն ու արարողությունները փոփոխել և հարմարեցնել կաթոլիկ եկեղեցու դավանանքին, ծեսերին ու արարողություններին:

Հեթում II-ի այս դիրքորոշումն ուժեղ դիմադրություն առաջ բերեց ինչպես Կիլիկյան Հայաստանում, այնպես էլ Մեծ Հայքում: Տարածայնություններին վերջ տալու համար Օշին թագավորը և Կոստանդին Գ կաթողիկոսը մի քանի համախոհների հետ Ադանա քաղաքում 1317 թ. նոր ժողով են գումարում: Ադանայի ժողովը վերահաստատում է Սսի ժողովի որոշումները: Սիս քաղաքում տեղի են ունենում ցույցեր և զինված ելույթներ: Ընդդիմադիրների մի մասին Օշին թագավորը և Կոստանդին կաթողիկոսը



Հերոն II

աքսորում են Կիպրոս կղզի, իսկ մի մասին էլ քանտարկում: Այսպես առաջացան հակադիր խմբավորումներ, որով խախտվում էր Կիլիկյան Հայաստանի հայ հասարակության հոգևոր-քաղաքական միասնությունը:

Սսի և Ադանայի ժողովներին չէր մասնակցել Հայաստանի և հայաբնակ շրջանների եպիսկոպոսական թեմերի առաջնորդների մեծ մասը: Նրանք գտնում էին, որ ժողովների որոշումներն իրավական ուժ չունեն, հետևաբար՝ անընդունելի են:

Սսի և Ադանայի ժողովների որոշումները լարված իրավիճակ ստեղծեցին նաև Մեծ Հայքում:

Հայաստանի եպիսկոպոսների և վարդապետների գերակշռող մասը, ովքեր համախմբվել էին **Գլաձորի համալսարանի** շուրջ, հրաժարվեցին ընդունել ժողովների որոշումները: Տարածայնությունը Հայոց կաթողիկոսության և թեմերի միջև վտանգում էր եկեղեցու միասնությունը: Դա կարող էր հանգեցնել հայ ժողովրդի տրոհմանը: Ի վերջո, ավանդապահ հոսանքի գործունեության շնորհիվ Սսի և Ադանայի ժողովների որոշումները հայության մեջ տարածում չգտան և մերժվեցին:



Հարցեր և առաջադրանքներ

1. XIII դ. երկրորդ կեսին ո՞վ հանդես եկավ քրիստոնեական եկեղեցիների միավորման նախաձեռնությամբ:
2. Ինչո՞ւ կաթողիկոսական աթոռը Հռոմկլայից տեղափոխվեց Սիս:
3. Պապականությունից և Բյուզանդիայից օգնություն ստանալու ակնկալությամբ Ի՞նչ փոփոխություններ էին ուզում անել Հայոց թագավորն ու կաթողիկոսը:
4. Մեծ Հայքում գումարված ո՞ր ժողովը մերժեց դավանափոխության առաջարկը: Վերհիշենք, թե ինչ է նշանակում «Միավորյալ մի բնություն» բանաձևը:
5. Ի՞նչ որոշում կայացրեց 1307 թ. գումարված ժողովը: Ինչպե՞ս արձագանքեցին այդ որոշմանը Կիլիկյան Հայաստանում և Մեծ Հայքում:
6. Ինչպե՞ս վարվեց Օշին թագավորը 1317 թ. Ադանայի ժողովի որոշումների դեմ բողոքողների նկատմամբ:
7. Ի՞նչ արձագանք գտան Սսի և Ադանայի ժողովների որոշումները Մեծ Հայքում:



Գործնական աշխատանք

1. Խմբերով քննարկե՛ք և դասարանին ներկայացրե՛ք ձեր խմբի կարծիքը հետևյալ հարցի վերաբերյալ. հայերի համար կրոնական, ազգային ու քաղաքական ի՞նչ վտանգ կարող էր ներկայացնել դավանափոխությունը:
2. Կատարե՛ք «Պրիզմա» վարժությունը «դավանափոխություն» բառով:

Բառարան

«Միավորյալ մի բնություն» – Հայոց եկեղեցին, «մի բնության» ուսմունքը պաշտպանելով, Քրիստոսի մեջ ընդունում է աստվածային և մարդկային միավորյալ մեկ բնությունը՝ անխառն և անշփոթ:



Գլաձոր. Թանահատի վանքը

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

10. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIV ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XV ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայոց եկեղեցին և միարարական շարժումը



Կիլիկյան Հայաստանին կաթոլիկացնելու հետ միաժամանակ՝ կաթոլիկ եկեղեցին ակտիվ քարոզչություն է ծավալում Մերձավոր Արևելքում և Արևելյան Հայաստանում: Այս գործն իրենց վրա են վերցնում կաթոլիկ ֆրանցիսկյան և դոմինիկյան վանական միաբանությունները: Նրանց հաջողվում է XIV դ. 30-ական թվականներին կաթոլիկություն ընդունած հայ հոգևորականներից վանական մի միաբանություն ստեղծել Քոնստանդուպոլիսում (Արտազ գավառ): Հետագայում նրանք Նախիջևանում ստեղծում են նաև կաթոլիկ եպիսկոպոսական աթոռ:

Միարարների կողմից հայ հավատացյալներին կաթոլիկ դարձնելու փորձերն առաջ բերեցին Հայոց կաթողիկոսության դիմադրությունը: **Հակոբ Բ Անավարզեցի** կաթողիկոսը հատուկ կոնդակով **միարարներին արգելեց** լատինական

ծեսով կատարել պատարագ, մկրտություն, հայերին դարձնել հռոմեադավան և այլն: Միարարական շարժման դեմ պայքարի կենտրոններ դարձան Գլաձորի, ապա Տաթևի համալսարանները: Ուսուցչապետեր Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և նրանց համախոհները կարողացան Գլաձորի և Տաթևի ուսումնագիտական կենտրոնները դարձնել միարարական շարժման դեմ մղվող պայքարի կենտրոններ: **Նրանց ջանքերի շնորհիվ միարարական գաղափարները հայ հասարակության մեջ լայն տարածում չստացան, և Հայոց եկեղեցին կարողացավ անաղարտ պահել իր դավանանքն ու անկախությունը:**

Հայոց եկեղեցին և պապականությունը

Ստեղծված բարդ իրավիճակը Հայոց եկեղեցու առջև նոր խնդիրներ դրեց: Կիլիկիային օգնելու համար պապականությունը պահանջում էր, որ հայերն ընդունեն կաթոլիկություն: Երկրի կառավարող շրջանների մի մասը որոշ հույսեր էր կապում պապականության հետ: Մյուս մասը, որը ղեկավարում էր **Հակոբ Բ Անավարզեցի** կաթողիկոսը, ճիշտ գնահատելով քաղաքական իրավիճակը, պահանջում էր դադար



րեցնել պապականության հետ անպտուղ ու վտանգավոր բանակցությունները: Լևոն V թագավորը, ով կողմնակից էր Արևմուտքի հետ սերտ հարաբերություններին, գահընկեց է անում Հայոց կաթողիկոսին: Նոր կաթողիկոս է ընտրվում Մխիթար Ա Գռներցին:

Հաջորդող իրադարձությունները պարզորոշ ցույց տվեցին, որ պապականությունը, օգտվելով Հայաստանի և Կիլիկիայի քաղաքական դժվար կացությունից, ամեն կերպ ուզում էր դավանափոխ անել հայ ժողովրդին և Արևելքի ամենահզոր Հայոց եկեղեցին ենթարկել հռոմեական եկեղեցուն: Այս նպատակով նա օգտագործում էր նաև հայ միաբարներին: Վերջիններս 1355 թ. դիմում են պապին իրենց միությունը պաշտոնապես հաստատելու համար: Հաջորդ տարի պապական արքունիքը հաստատեց «Հայ միաբանող եղբայրներ» միաբանությունը:



Մետրոպ Ա Արտազեցի


Սակայն պապականությունը այդպես էլ որևէ ռազմական աջակցություն ցույց չտվեց Կիլիկյան Հայաստանին: Երկրում գնալով աճում էր դժգոհությունը պապականությունից: Այս պայմաններում **1361 թ. Մետրոպ Ա Արտազեցի** կաթողիկոսը (1359-1372) **Սիս** քաղաքում հրավիրեց եկեղեցական ժողով, որը չեղյալ հայտարարեց Սսի և Աղանայի ժողովների ընդունած որոշումները:

Կաթողիկոսական աթոռը Կիլիկիայի Հայոց թագավորության անկումից հետո

Հայկական վերջին թագավորության անկումից հետո (1375 թ.) Հայոց կաթողիկոսությունը կորցրեց իր քաղաքական հենարանը:

Եգիպտոս գերի տարված Պողոս Ա Սսեցի կաթողիկոսը 1375 թ. կարողանում է ազատվել գերությունից և վերադառնալ Սիս: Չնայած կաթողիկոսական աթոռը Սիս քաղաքում էր, սակայն ստեղծվել էին այնպիսի պայմաններ, որ կաթողիկոսները միշտ չէ, որ գտնվում էին այնտեղ: Նրանք սովորաբար Սիս էին գալիս ձեռնադրելու և մեռնը օրհնելու համար:

Սսի կաթողիկոսության համար ստեղծվել էին բավական բարդ պայմաններ: Նախ խախտվել էին կաթողիկոսության և թեմերի միջև նախորդ շրջանում ձևավորված փոխհարաբերությունները: Հայաստանը և Փոքր Ասիայի հայաբնակ տարածքները գտնվում էին մահմեդականների գերիշխանության տակ: Աշխույժ գործունեություն էին ծավալել



Ս. Գրիգոր Տաթևացի

կաթոլիկ քարոզիչները: Ստեղծված պայմաններում հիմնական խնդիրը հայապահպանության կազմակերպումն էր: Այն հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ էր անաղարտ պահել հայկական մշակույթը և թույլ չտալ, որ հայ բնակչությունը կտրվի սեփական մշակութային միջավայրից: Այս գործում Հայոց եկեղեցուն մեծ օգնություն ցույց տվեցին Հայաստանում և նրանից դուրս գոյատևող իշխանական տները:

Այդ ժամանակաշրջանում հայոց հոգևոր-մշակութային կյանքում չափազանց մեծ էր **Տաթևի համալսարանի** դերը: Բացվում էին նաև ուսումնագիտական նոր կենտրոններ: Վարդապետական գավազաններ ստացած շրջանավարտները ձեռնամուխ էին լինում հայ բնակչության հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպմանը:

Միաժամանակ քայլեր էին արվում՝ անրապնդելու Հայոց կաթողիկոսության դիրքերը: Հայոց եկեղեցու միասնությունը պահպանելու համար Տաթևի համալսարանի ուսուցչապետ

Ս. Գրիգոր Տաթևացին կարողացավ 1409 թ. Աղթամարի կաթողիկոսությունը դարձնել Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա թեմ: Սակայն Ամենայն Հայոց կաթողիկոսության վիճակը գնալով ծանրանում էր:

Պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդի ազգային, կրթական, մշակութային կյանքի կազմակերպման ծանրությունը հիմնականում ընկավ Հայոց եկեղեցու ուսերին:





Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր միաբանություններին էր հանձնարարված Արևելքում կաթոլիկություն տարածելու գործը:
2. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Հայոց կաթողիկոսությունը միաբարական շարժման դեմ:
3. Ինչո՞ւ էր Կիլիկյան Հայաստանը օգնության հույսը կապում միայն Եվրոպայի հետ:
4. Ինչո՞ւ Լևոն V-ը գահընկեց արեց Հակոբ Բ կաթողիկոսին:
5. Ե՞րբ չեղյալ հայտարարվեցին Սսի և Ադանայի ժողովների որոշումները:
6. Ի՞նչ դեր էր խաղում Հայոց եկեղեցին պետականության բացակայության պայմաններում:
7. Հայոց եկեղեցին ի՞նչ դժվարությունների առջև կանգնեց Կիլիկյան Հայաստանի անկումից հետո:
8. Ժամանակի հայ հոգևոր-մշակութային կյանքում ի՞նչ դեր է խաղացել Տաթևի համալսարանը:

Ք ն ն ա ր կ ու մ

Ինչո՞ւ միաբարական շարժումը հայության մեջ լայն տարածում չստացավ:

Որո՞նք էին դրա պատճառները:

XIV դարի կեսերին ստեղծված պայմաններում Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր կառավարող շրջաններից որի՞ դիրքորոշումն էր ավելի ճիշտ: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:





Լ ր ա ց ու ճ ի չ ն յ ու թ

Գլաձորի վանքն ու համալսարանը

13-14-րդ դարերի ուսումնական-մշակութային կյանքի նշանավոր կենտրոններից մեկն էր Գլաձորի վանքի համալսարանը: Նրա հիմնադրման թվականը ստույգ հայտնի չէ, բայց հավանական է, որ հիմնադրվել է 1280-ական թվականներին, Ներսես Մշեցի հայտնի ուսուցչապետի ջանքերով: Գլաձորի համալսարանը գտնվում էր Վայոց ձորի գավառում: Գլաձորի համալսարանը հատկապես նշանավոր է դառնում Ներսես Մշեցու աշակերտի՝ Եսայի Նչեցու ուսուցչապետության օրոք: Գլաձորի համալսարանը միջնադարում հայտնի է եղել իբրև «երկրորդ Աթենք», «մայրաքաղաք իմաստունների» և այլն: Գլաձորի համալսարանում են ստեղծագործել նաև բազմաթիվ գրիչներ ու մանրանկարիչներ:

Կյուրեղ Քիպարյան. Պատմություն հայ հին գրականության



«Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանը



Սուրբ Գրիգոր Տաթևացու մասին

Սուրբ Գրիգոր Տաթևացին Սուրբ Հովհաննես Որոտնեցու ամենահայտնի աշակերտներից էր: Ծնվել է 1344 թ. Վայոց ձորի գավառում: Դեռ վաղ հասակից Գրիգորը դառնում է Հովհաննես Որոտնեցու աշակերտը, Երուսաղեմի Սուրբ Հակոբ հայոց վանքում ձեռնադրվում քահանա, Երզնկայում դառնում վարդապետ, իսկ Ապրակունիքի վանքում՝ ծայրագույն վարդապետ: Հովհաննես Որոտնեցու մահվանից հետո Տաթևացին դառնում է Տաթևի համալսարանի ուսուցչապետը: Գրիգոր Տաթևացին կարողանում է այստեղ մեծ քանակությամբ աշակերտներ հավաքել՝ նյութական օգնություն ստանալով Սյունյաց Սմբատ Օրբելյան իշխանից և Սյունյաց թեմի արքեպիսկոպոս Առաքել Սյունեցուց: Իր ուսուցչի՝ Հովհաննես Որոտնեցու պատգամին հավատարիմ, Գրիգոր Տաթևացին աննկուն պայքար սկսեց կաթոլիկ քարոզիչների դեմ՝ կարողանալով ամուր ու անասան պահել Հայ Եկեղեցու դավանանքը: Իր արդյունավոր կյանքը Գրիգոր Տաթևացին ավարտեց 1409 թ. դեկտեմբերի 27-ին և իր իսկ աշակերտների ձեռքով թաղվեց Տաթևի վանքում: Առաքել Սյունեցին նրա հիշատակին Տաթևի վանքում մի գեղեցիկ խաչքար կանգնեցրեց:

Նորայր արքեպիսկոպոս Պողարյան. Հայ գրողներ



Տաթևի վանքը



11. ԿԱՅՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՅՈՒԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ ԷԶՄԻԱՃՆՈՒՄ

Կաթողիկոսական աթոռի տեղափոխման անհրաժեշտությունը

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո կաթողիկոսական աթոռը հայտնվեց մահմեդական տարբեր իշխանությունների տիրապետության տակ, որոնք ծանր հարկատվության ենթարկեցին այն: Շատ հաճախ կաթողիկոսները գահից հեռացվում էին կամ գահ բարձրանում մահմեդական տիրակալների կամայականությամբ: Այս ամենն առիթ էր ստեղծում նաև ներքին երկպառակտության և պայքարի: Տարբեր խմբավորումներ պայքարում էին կաթողիկոսական գահի համար:

Աթոռն այլևս դադարել էր բովանդակ հայության համազգային-եկեղեցական շահերն արտահայտող կենտրոն լինելու իր առաքելությունից, դարձել իշխող մահմեդականների շահատակությունների, զեղծումների և անմիաբանության արտահայտիչ:

Ահա թե ինչու զնալով օրվա խնդիր դարձավ կաթողիկոսական աթոռը Սսից Մայր Դայաստան տեղափոխելու հարցը: Այս գաղափարը նոր չէր: Առաջին անգամ այն բարձրացվել էր դեռևս XIII դարի վերջերին, երբ եգիպտական գործերը գրավեցին ու ավերեցին Զոռնկյան (1292 թ.) Զայոց կաթողիկոսների նստավայրը: Այս դեպքից հետո էր, որ հայտնի եկեղեցական գործիչ, պատմագիր **Ստեփանոս Օրբելյանը** գրեց իր նշանավոր **«Սուրբ Կաթողիկեի ողբը»** պոեմը, որտեղ բաղձանք էր արտահայտում **Վաղարշապատում վերականգնված տեսնելու «Թագավորի գահն ու կաթողիկոսի աթոռը»:** Այս գաղափարը փայփայում էին նաև ժամանակի նշանավոր գործիչներ Ս. Զովհան Որոտնեցին, Ս. Գրիգոր Տաթևացին, հայ հոգևոր ու մշակութային շատ ուրիշ գործիչներ: Դա բովանդակ հայ ժողովրդի բաղձանքն էր, մեծ երազանքը:




Զոռնկյա



Պետականությունից զուրկ ժողովրդին համախմբելու և առաջնորդելու միակ ազգային կառույցը մնացել էր եկեղեցին: Կիլիկյան իրականությունն այլևս ի գորու չէր կատարել այդ վեհ առաքելությունը: Կաթողիկոսական աթոռի դերն ու նշանակությունը վերականգնելու և ամրապնդելու համար այն պետք է վերահաստատվեր իր նախնական տեղում՝ **Հայոց աշխարհի սրտում՝ Այրարատում, Ս. Էջմիածնում:**

**1441 թվականի
ազգային-եկեղեցական
ժողովը և կաթողի-
կոսական աթոռի
տեղափոխումը**



Կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը դարձել էր Հայոց եկեղեցու օրակարգային ամենաառաջնային հարցը: Հայաստանի և գաղթավայրերի հայ բնակչությունը նշանակալից ջանքեր էր թափում այդ ուղղությամբ: Շարժման նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցնում Սյունյաց և Վասպուրականի հոգևորականության լավագույն ներկայացուցիչները՝ Թովմա Մեծփեցու և Հովհաննես Հերմոնեցու գլխավորությամբ:

Թովմա Մեծփեցին (1378-1446) Գրիգոր Տաթևացու աշակերտն էր ու գաղափարակիցը: Վարդապետական աստիճան ստացել էր անձամբ Տաթևացուց: Շուրջ 30 տարի գլխավորել էր Մեծփի նշանավոր դպրոցը, դաստիարակել հարյուրավոր աշակերտներ, զարկ տվել մատենագիտությանն ու մանկավարժությանը:

Հովհաննես Հերմոնեցին (մոտ 1370-1448) նույնպես աշակերտել էր Գրիգոր Տաթևացուն, որի մահից հետո դարձել էր Տաթևի դպրոցի ուսուցչապետը: Աչքի էր ընկել կաթոլիկական քարոզչության դեմ իր հետևողական պայքարով:

XV դ. 30-ական թվականներին Հերմոնեցին և Մեծփեցին պարբերաբար հանդիպումներ են ունենում Մեծ Հայքի նշանավոր վարդապետների, թեմակալ առաջնորդների, մեծատունների հետ: Գնալով շարժումը ձեռք էր բերում լայն ժողովրդականություն: Կաթողիկոսական աթոռի տեղափոխմանը հավանություն են տալիս մաս կիլիկյան հոգևորականներից շատերը: Քայլեր են ձեռնարկվում մաս Ս. Էջմիածնի վանքը տնտեսապես հզորացնելու և բարվոք վիճակ ստեղծելու ուղղությամբ: **1431 թ. Սյունյաց իշխան Ռուստամ Օրբելյանը Ս. Էջմիածնին նվիրում է 7 խոշոր գյուղեր (Վաղարշապատ, Օշական, Նորագավիթ, Մուղնի, Աղավնատուն և այլն):** Վանքում սկսվում են շինարարական վերանորոգման աշխատանքներ:



Կիրակոս Ա Վիրապետի

Շուտով շարժման ղեկավարները հատուկ հրավիրագիր են ուղարկում Սիս՝ Հայոց կաթողիկոս Գրիգոր Թ Մուսաբեկյանին Վաղարշապատ տեղափոխվելու և կաթողիկոսությունն այստեղ շարունակելու առաջարկությամբ: Գրիգոր Թ-ն ծերության պատճառով չի կարողանում տեղափոխվել, սակայն իր գրավոր համաձայնությունն է տալիս կաթողիկոսական նոր ընտրություններ անցկացնելու և Մայր աթոռը Էջմիածին տեղափոխելու վերաբերյալ:

1441 թ. ապրիլին սկսեցին Երևան ժամանել ազգային-եկեղեցական ժողովի մասնակիցները՝ 300 հոգի: Հայաստանում իշխող կարա-կոյունլու Ջահան շահը իր ենթականերին հրահանգ էր տվել ըստ ամենայնի աջակցել կաթողիկոսական ընտրություններին:

Մայիսի 25-ին տեղի ունեցան կաթողիկոսական ընտրություններ, որի արդյունքում կաթողիկոս ընտրվեց չեզոք, սակայն շատ ճանաչված ու հարգված հոգևորական **Կիրակոս Վիրապետին**: Նա ծնունդով վասպուրականցի էր, եղել էր ճգնավոր և որ Վիրապում, պաշտոնավարել Ղրիմի Կաֆա քաղաքում: Հայտնի էր իր սրբակենցաղ ու խոնարհ ճիստուկացով:

Մայիսի 28-ին 12 եպիսկոպոսների ձեռքով Կիրակոս Վիրապետին օծվում է Ամենայն Հայոց կաթողիկոս: Հատկանշական է, որ ինչպես կաթողիկոսի օծումը, այնպես էլ ընտրությանը հետևած մյուռոնի օրհնությունը կատարվեց Ս.Գրիգոր Լուսավորչի աջով, որը դեպքերից քիչ առաջ Սսից տեղափոխվել էր Ս. Էջմիածին:

Այսպիսով կաթողիկոսական այս ընտրություններով ավարտվեց Հայոց կաթողիկոսական աթոռի 1000-ամյա աստանդական ու դեգերումներով լեցուն շրջանը, այն վերադարձավ իր բնական, նախնական վայրը: Հայության համար այս իրադարձությունը ունեցավ պատմական կարևոր նշանակություն: **Վերստին Ս. Էջմիածինը դարձավ հայ ժողովրդի ոչ միայն հոգևոր-եկեղեցական կյանքի, այլև նրա կրթական, մշակութային գործունեության, քաղաքական ակնկալությունների ու ազատագրական պայքարի կենտրոնը:**

Հայոց կաթողիկոսությունը ձեռնամուխ եղավ հայ բնակչության կրթական և մշակութային կյանքի կազմակերպման գործին: Կիրակոս Ա Վիրապետու ջանքերով Թովմա Մեծոփեցին դպրոց հիմնադրեց Վաղարշապատում: Նոր դպրոցներ բացվեցին Սյունիքում, Բաղեշում և այլուր:



Էջմիածնում հաստատված Հայոց կաթողիկոսությունը պետականության բացակայության պայմաններում իր վրա վերցրեց նաև արտաքին աշխարհի հետ հայ հասարակության փոխհարաբերությունները կարգավորելու դերը:

Մայր աթոռ Ս. Էջմիածինը սկսում է ապրել բնականոն կյանքով, որը հույս էր ներշնչում, թե եկել է հայ ժողովրդի վերազարթոնքի այնքան երկար սպասված պահը:



Հ ար ց եր և առ ա ջ ա դր ա ն ք ն եր

1. Ի՞նչ վիճակում հայտնվեց Հայոց կաթողիկոսությունը 1375 թ. հետո: Հայոց եկեղեցու ներքին երկպառակտությունների մասին վկայող ի՞նչ տվյալներ կարող եք բերել:
2. Ե՞րբ էր առաջին անգամ բարձրացվել կաթողիկոսական աթոռը Սսից Հայաստան տեղափոխելու հարցը: Դրա հետ կապված ի՞նչ նշանավոր պոեմ է գրել Ստեփանոս Օրբելյանը:
3. Ովքե՞ր գլխավորեցին կաթողիկոսական աթոռի տեղափոխման շարժումը:
4. Ո՞վ էր թուվմա Մեծոփեցին:
5. Գրիգոր Տաթևացուց հետո ո՞վ էր դարձել Տաթևի դպրոցի ուսուցչապետը:
6. Ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին Ս. Էջմիածնի վանքը տնտեսապես հզորացնելու նպատակով:
7. Ազգային-եկեղեցական 1441 թ. ժողովում ո՞վ ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս:
8. Հայ ժողովրդի կյանքի ուրիշ ի՞նչ ոլորտներ էր կարգավորում Մայր աթոռ Ս. Էջմիածինը:

Ք ն ն ա ր կ ու մ

1. Հիմնավորե՛ք կաթողիկոսական աթոռը Սսից Հայաստան տեղափոխելու անհրաժեշտությունը: Ուրիշ ելք կա՞ր, թե՞ ոչ:
2. Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ջահան շահը չխոչընդոտեց կաթողիկոսական ընտրությունների անցկացմանը:
3. Պատմական ի՞նչ նշանակություն ունեցավ Հայոց կաթողիկոսական աթոռի վերադարձը Էջմիածին:



Լ ր ա ց ու ճ ի չ ն յ ու թ

Թովմա Մեծովեցին 1441 թ. կաթողիկոսական ընտրության մասին

Մեր 890 (1441) թվականին Սուրբ Դոգու ազդմամբ և բարերար Աստծու հրաշագործությամբ, բոլոր հայերի միաբանությամբ սուրբ Էջմիածնում կաթողիկոս կարգեցինք Աստծու սքանչելի և փառավոր այր Տեր Կիրակոսին՝ պատրիարք և հայրապետ Ամենայն Հայոց:

Հավաքվեցին վարդապետներ և եպիսկոպոսներ, վանքերի կրոնական սուրբ հայրեր և պատվական երեցներ՝ ավելի քան երեք հարյուր հոգի և բազում միայնակյացներ, և ազատներ, և ազատների որդիներ, ծեռնավորներ ու տանուտերեր, և ժողովրդի անթիվ ու անհամար բազմություն: ...Իսկ հեռավոր վարդապետներն ու եպիսկոպոսները նամակով միաբանեցին մեզ հետ:

Այստեղ տեսնել էր պետք մեր ամբողջ ազգի ուրախությունն ու ցնծությունը. զանգակների փողն էր հնչում, երիտասարդները գոչում էին, ծերերն աղաղակում էին և ցնծությամբ օրհնում Աստծուն, մանուկները խայտում էին, կանայք երկրպագությամբ ու լալով բոլորին զարհուրանք էին պատճառում, իսկ անօրենները նայելով զարմանում էին: Եվ ինչպես Փրկչի՝ Երուսաղեմ սուրբ քաղաքը գալու օրը մեծ ուրախությամբ ընդառաջ եկան, նույնպես այսօր եղավ հայերիս համար, որովհետև վաղուց անտեր էին մնացել և չէին տեսել հավաքված վարդապետների ու եպիսկոպոսների այսպիսի միաբանությունը: Եվ մեծամեծներն ու փոքրերը, հոգևորականներն ու աշխարհականները մեզ ու մեր ժողովը սիրով ընդունեցին և մեր բոլոր եղբայրներին ողջունեցին որպես առաքյալների ու Աստծու հրեշտակների: ... Եվ

ահա այդ ժամին եկավ մի արծիվ սավառնաթև, սաստիկ գոչյունով նստեց Էջմիածնի Մայր տաճարի գլխին, և շատերը թողեցին հոգևոր ուրախությունը, ելան տեսան ու եկան պատմեցին:



Թովմա Մեծովեցի.
Հիշատակարան



12. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ Հայոց կաթողիկոսություն

Հայոց ազգային անկախ եկեղեցին գլխավորում է ծայրագույն պատրիարք-կաթողիկոսը: Պատմականորեն Հայոց եկեղեցու ներսում առաջացել կամ ձևավորվել է նվիրապետական կառույց՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի գերագահությամբ: Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա, իսկ երբեմն էլ որպես հակաթոռություններ՝ Հայոց եկեղեցում առաջացել են մասնավոր կաթողիկոսություններ (Վրաց, Աղվանից, Սսի, Աղթամարի և այլն), պատրիարքություններ (Երուսաղեմի և Կ. Պոլսի), մետրոպոլիտություն (Սյունյաց) և առաջնորդություններ կամ թեմեր:



Դաղիվանք

Հայոց եկեղեցու ընդհանուր կառույցի մեջ և Հայոց կաթողիկոսի գերագահության ներքո IV-VII դարերում գործել է Վրաց կաթողիկոսությունը:

Ժամանակի ընթացքում վերացան այն կաթողիկոսությունները (Աղվանից, Աղթամարի և այլն), որոնք առաջացել էին պատմական, քաղաքական և կամ անձնական պատճառներով:

Աղվանից կաթողիկոսություն

Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներից Աղվանից կաթողիկոսությունն իր գոյության ամբողջ ընթացքում գործել է Ամենայն Հայոց կաթողիկոսության գերագահության ներքո: Այս աթոռը հիմնադրվել էր VI դարի երկրորդ կեսին և հանդիսանում էր Մեծ Հայքի Ուտիք և Արցախ նահանգների, ինչպես նաև բուն Աղվանքի (այստեղից էլ անվանումը) եկեղեցական բարձրագույն մարմինը: Աղվանից աթոռը միշտ էլ ընդունել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու գերագահությունը, իսկ կաթողիկոսները ձեռնադրվել են Ամենայն Հայոց հայրապետի կողմից: XIV դարի վերջերին Աղվանից կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Խաչենի Գանձասար



վանքը (այստեղից էլ նաև Գանձասարի կաթողիկոսություն անվանումը): Այդ ժամանակներից էլ կաթողիկոսական աթոռը ժառանգական իրավունքով անցնում է **Ջասան-Ջալալյան իշխանական ընտանիքի կրտսեր ներկայացուցիչներին**: 1441 թ. իրադարձությունների ժամանակ Աղվանից կաթողիկոսն էր Յովհաննես Է Ջալալը, որը թեև գործուն մասնակցություն չունեցավ ընտրություններին, սակայն ճանաչեց դրանք և ընդունեց Կիրակոս Ա Վիրապեցու գերագահությունը:

Աղվանից կաթողիկոսությունն իր գոյությունը պահպանեց մինչև 1815 թ., երբ ցարական Ռուսաստանը Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսության կարգավիճակը փոխեց և դարձրեց մետրոպոլիտություն, ապա այն ավելի ուշ դարձավ եպիսկոպոսական թեմ:

Աղթամարի կաթողիկոսություն

Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական մյուս աթոռը Աղթամարի կաթողիկոսությունն էր: Այս աթոռը հիմնադրվել էր 1113 թ., երբ Վասպուրականի հոգևորականների մի խումբ, չճանաչելով 20-ամյա Գրիգոր Գ Պաիվալունու կաթողիկոսությունը, Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսին հռչակում է Ամենայն Հայոց կաթողիկոս: 1114 թ. Շուղրի Կարմիր վանքում հրավիրված եկեղեցական ժողովը մերժում է Դավիթ Թոռնիկյանի կաթողիկոսությունը և նրա ընտրությունը հռչակում ապօրինի: Սակայն Վասպուրականի հոգևորականների այդ խումբը, չենթարկվելով Կարմիր վանքի ժողովի որոշումներին, Աղթամարի կաթողիկոսությունը հայտարարում է ինքնուրույն: Աղթամարի կաթողիկոսությունը փաստորեն հակաթոռ էր, որի իրավունքները տարածվում էին միայն Վասպուրական նահանգի մի փոքր մասի վրա: Աթոռանիստն էր Աղթամար կղզու (այստեղից էլ կաթողիկոսության անվանումը) Ս. Խաչ վանքը: 1441 թ. իրադարձությունների ժամանակ Աղթամարում գահակալում էր **Ջաթարիա Գ կաթողիկոսը (1434-1464)**, ով մեծ աջակցություն ցուցաբերեց կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու գործին:

Կաթողիկոսական այս աթոռը գոյատևել է մինչև 1895 թ.:



Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին



Սսի կաթողիկոսություն

1441 թ. Վաղարշապատի ազգային-եկեղեցական ժողովը Սսում մնացած Գրիգոր Թ Մուսաբեկյանցին գահընկեց հայտարարեց: Գրիգոր Մուսաբեկյանցը, հնազանդվելով այդ որոշմանը, ընդունում է նորընտիր Կիրակոս Ա Վիրապեցու կաթողիկոսությունը: Սրանով ավարտվում է Սսի ընդհանրական կաթողիկոսական աթոռի գործունեությունը: Սակայն Սսի աթոռի որոշ միաբաններ, չհամակերպվելով նման իրավիճակի հետ և չցանկանալով զրկվել իրենց առանձնաշնորհումներից, որոշում են վերականգնել Սսի կաթողիկոսական աթոռը՝ եթե ոչ ընդհանրական, ապա գոնե տեղական իրավասություններով: 1446 թ. Սսում հրավիրվում է եկեղեցական ժողով, որը կաթողիկոս է հռչակում Թոխաթի (Եվդոկիա) հայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ Եվդոկացուն: Կարապետ Եվդոկացու իրավասությունները տարածվում էին միմիայն Եգիպտոսի քաղաքական տիրապետության ներքո գտնվող շրջանների վրա՝ Եգիպտոս, Սիրիա, Կիպրոս, Կիլիկիա և այլն:



Սսի կաթողիկոսարանը

Կարապետ Եվդոկացիով սկսվում է Կիլիկյան կաթողիկոսների ցանկը, որը շարունակվում է առ այսօր: Մինչև 1921 թ. կաթողիկոսական նստավայրն է եղել **Սիսը**, իսկ դրանից հետո՝ **Անթիլիասը** (Լիբանան): Այսօր այն անվանվում է Մեծի Տանն Կիլիկիո Զայոց Կաթողիկոսություն:

Ինչպես Կարապետ Եվդոկացին, այնպես էլ նրա հաջորդները ճանաչել են Ս. Էջմիածնի գերագահությունը:

Երուսաղեմի հայոց պատրիարքություն

Զայոց եկեղեցու նվիրապետական աթոռներից է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքությունը: Այն հիմնադրվել է 638 թ.: Զայոց առաջին պատրիարք Աբրահամը խալիֆից ստացել է մի հրովարտակ, որի համաձայն՝ Երուսաղեմում հայերին տրվել են հույներին հավասար իրավունքներ: Զայերի սեփականություն են ճանաչվել **Ս. Զակոբյանց վանքը, Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարը, Գողգոթայի բարձունքը, Ձիթենյաց լեռան Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին**, բազմաթիվ կալվածքներ և,



Երուսաղեմի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

որ ամենակարևորն է, **համայն քրիստոնեության ամենագլխավոր սրբություններից մեկը՝ Ս. Հարություն տաճարի մի մասը:** Սսի 1307 թ. ժողովից հետո, երբ որոշվեց Հայոց եկեղեցին միավորել կաթոլիկ եկեղեցու հետ, Երուսաղեմի հայոց պատրիարք Սարգիս եպիսկոպոսը ոչ միայն մերժեց ժողովի որոշումները, այլև 1311 թ. Երուսաղեմի հայոց պատրիարքությունը հայտարարեց Կիլիկյան աթոռից անջատված: Այդ թվականից աթոռը գործում էր անկախ:

1441 թ. ընտրությունների ժամանակ Երուսաղեմի հայոց պատրիարքն էր Հովհաննես եպիսկոպոսը, ով ճանաչեց ընտրությունը և ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոսի գերագահությունը:

Երուսաղեմի հայոց պատրիարքությունն այսօր էլ շարունակում է իր գործունեությունը:

Կ ո ս տ ա ն ղ ն ու պ ու լ ս ի հ ա յ ո �ց պ ա տրիարքություն



Կոստանդնուպոլսի Ս. Աստվածածին եկեղեցին

Թեև հայերը Կ. Պոլսում բնակվում էին քաղաքի հիմնադրման ու մայրաքաղաք հռչակվելու ժամանակներից ի վեր (IV դարի սկիզբ), սակայն նրանք այստեղ չունեին ազգային-եկեղեցական կառույցներ: Բյուզանդական եկեղեցին հետևողականորեն շարունակում էր իրագործել հայերին քաղկեդոնականացնելու իր քաղաքականությունը: Այս պատճառով Կ. Պոլսի հայ բնակիչներից շատերը ստիպված էին դավամափոխ լինել: Վիճակն արմատապես փոխվեց, երբ օսմանյան թուրքերը 1453 թ. գրավեցին Կ. Պոլիսն ու կործանեցին Բյուզանդական կայսրությունը: Օսմանյան կառավարողները շտապեցին անմիջապես ճանաչել հայերի իրավունքները և ի հակաշիռ հույների՝ նրանց շնորհեցին որոշ արտոնություններ: Այսպես, 1461 թ. Հովակիմ



Եպիսկոպոսը ճանաչվեց կայսրության տարածքում բնակվող հայերի հոգևոր առաջնորդ և նշանակվեց Կ. Պոլսի առաջին հայ պատրիարք: Այսուհետև հայերին թույլատրվեց կառուցել եկեղեցիներ, վանքեր, բացել դպրոցներ: Կ. Պոլսի հայոց պատրիարքների առաջին նստավայրն է եղել Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցին: **1641 թ. առ այսօր պատրիարքական նստավայրը Գունգափուլի Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցին է:**



Մետրոպոլիտությունը Սյունյաց աթոռին տրված առանձնաշնորհումն էր: Հատկապես XI-XV դարերում, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսության նստավայրը գտնվում էր պատմական Հայաստանի սահմաններից դուրս, Սյունյաց մետրոպոլիտը համարվում էր Մեծ Հայքի եպիսկոպոսների գլխավորը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի գերագահության ներքո: 1837 թ. ցարական կառավարության հրամանով Սյունյաց մետրոպոլիտությունը դադարեց գոյություն ունենալուց՝ վերածվելով եպիսկոպոսական թեմի:



Եպիսկոպոսությունները թեմական առաջնորդություններ են: Եպիսկոպոսները ձեռնադրվում են կաթողիկոսի կողմից: Այսօր Մայր աթոռ Ս. Էջմիածինն ունի աշխարհով մեկ տարածված բազմաթիվ թեմեր:



Հարցեր և առաջադրանքներ

1. Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա նվիրապետական ի՞նչ կառույցներ են առաջացել IV-XV դարերում:
2. Ե՞րբ է ձևավորվել Աղվանից կաթողիկոսությունը և մինչև ո՞ր թվականն է այն գործել: XIV դ. վերջերից որտե՞ղ էր գտնվում Աղվանից կաթողիկոսական աթոռը:
3. Ե՞րբ է հիմնադրվել Աղթամարի կաթողիկոսությունը և մինչև ե՞րբ է այն գոյատևել:



- 4. Ինչո՞ւ և ե՞րբ կազմավորվեց Սսի կաթողիկոսությունը:
- 5. Ե՞րբ է հիմնադրվել Երուսաղեմի հայոց պատրիարքությունը:
- 6. Ինչո՞ւ 1311 թ. Երուսաղեմի հայոց պատրիարքությունն իրեն հայտարարեց անջատված Կիլիկյան աթոռից:
- 7. Ինչո՞ւ օսմանյան թուրքերն անմիջապես ճանաչեցին Կ. Պոլսի հայերի իրավունքները: Ո՞ր թվականին և ո՞վ նշանակվեց Կ. Պոլսի հայոց պատրիարք:
- 8. Ո՞ր թվականին Սյունյաց մետրոպոլիտությունը լուծարվեց:

Գ ո ղ ծ ն ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք

Լրացրե՛ք Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցին վերաբերող աղյուսակը.

Նվիրապետական կառույցի անվանումը	Հիմնադրման տարեթիվը	Հիմնադրման պատմական պայմանները	Առաջնորդանիստը	Մինչև ե՞րբ է գործել (գործում է)



Լվով. Ս. Աստվածածին հայկական եկեղեցի (1363 թ.)



13. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ XV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Բագրատունյաց և Կիլիկյան Հայկական թագավորությունների անկումը, քոչվորական ցեղերի (սելջուկյան-թուրքեր, մոնղոլ-թաթարներ, թուրքմեններ և այլն) ավերիչ արշավանքներն ու երկարատև տիրապետությունը, տնտեսական անապահով վիճակն ու զանգվածային արտագաղթերը թուլացրեցին հայ ժողովրդի դիմադրական կարողությունները: Այս իրավիճակը հայ քաղաքական և հոգևոր գործիչներին ստիպում էր ելք փնտրել դուրս գալու ստեղծված սարսափելի իրականությունից:

Հայկական պետականության վերականգնման փորձ XV դարի կեսերին

XIV-XV դարերում ազատագրական գաղափարների հիմնական կրողը դարձավ Հայոց եկեղեցին: Եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչներից շատերը ազնվականական ընտանիքների հոգևոր-եկեղեցական կոչում ընդունած շառավիղներն էին:



XV դարի կեսերին առանձնակի դեր և նշանակություն ունեին հատկապես Աղթամարի կաթողիկոսական աթոռին հաստատված Արծրունյաց թագավորական տան ազգականները՝ Սեֆեդինյանները: Անկախության վերականգնման գաղափարն այստեղ երբեք չէր մոռացվել: Վասպուրականի ժամանակագիրներն ու հիշատակագիրներն իրենց ստեղծագործություններում հաճախ էին դիմում Ամենաբարձրյալին ու խնդրում **«վերանորոգել Հայոց ազգի խափանված թագավորությունը»:** Բացի Աստծուն ուղղված աղաչանքներից ու խնդրանքներից, ցանկություններից ու երազանքներից, Վասպուրականի հոգևորականները գործնական քայլեր ձեռնարկեցին Հայկական թագավորությունը վերականգնելու համար:

Այդ ուղղությամբ եռանդուն գործունեություն ծավալեց **Աղթամարի Ջաքարիա Գ կաթողիկոսը:** Ջաքարիա կաթողիկոսը, ով Արծրունի-Սեֆեդինյան ընտանիքի ներկայացուցիչներից էր, ժամանակի աչքի ընկնող եկեղեցական գործիչ էր, մտավոր բարձր կարողություններով օժտված անձնավորություն: Նա հմուտ դիվանագետ էր, նաև զինվորական գործիչ: Ջաքարիան ստեղծել էր լավ զինված ու կարգապահ



Ջաքարիա Գ կաթողիկոսի խաչքարը

հարցի շուրջ և անգամ նրան ներկայացնում գահի հավակնորդին: Հայոց գահի թեկնածուն Ջաքարիայի եղբորորդի Սմբատ Արծրունի-Սեֆեդիմյանն էր: Բանակցությունների ժամանակ Ջաքարիա Գ-ի անակնկալ մահը, սակայն, չկասեցրեց այդ ուղղությամբ տարվող աշխատանքները:



Սմբատ Արծրունու թագադրման և օծման արարողությունը

զորաջոկատ, որը պահպանում էր կաթողիկոսական աթոռն ու Արծրունյաց կալվածքները մահմեդականների անընդհատ կրկնվող հարձակումներից: Կաթողիկոսին անձամբ ծանաչում և հովանավորում էր Հայաստանի և շրջակա երկրների թուրքմեն տիրակալ Ջահան շահը:

Վերջինս մեղմ, հեռատես քաղաքականություն էր վարում հպատակ քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ: Շահը ցանկանում էր նրանց օգնությամբ զարկ տալ իր երկրի տնտեսությանն ու առևտրին և հետևաբար առանձին շնորհումներ էր տալիս քրիստոնյա հպատակներին:

1463-1464 թթ. Ջաքարիա Գ-ն բանակցություններ է վարում Ջահան շահի հետ՝ Վասպուրականի հայկական թագավորությունը վերականգնելու

Աղթամարի նոր կաթողիկոսը՝ Ստեփանոս Դ Տղան, հաջողությամբ շարունակեց բանակցությունները և շահից համաձայնություն ձեռք բերեց Սմբատին Հայոց թագավոր օծելու վերաբերյալ: 1465 թ. սկզբներին **Ստեփանոս Տղան Աղթամարի Ա. Խաչ մայր եկեղեցում հայոց մեծամեծերի և բարձրաստիճան հոգևորականների ներկայությամբ հանդիսավորությամբ Սմբատ Արծրունուն օծում է որպես Հայոց թագավոր: Ժամանակակիցը անհուն բերկրանքով է արձանագրել այս իրողությունը. «Այնժամ պարոն Սմբատին օծեցին Հայոց թագավոր իր նախնի Գագիկի օրինակով: Եվ թող Փրկիչը զորացնի նրա թագավորությունը, բարձրացնի նրա աթոռը, քանզի վաղուց հայոց ազգը թագավոր չէր տեսել»:**

Սմբատ Արծրունու թագավորությունը չունեւր և չէր էլ կարող ունենալ որևէ համահայկական



նշանակություն: ճիշտ է, 1465-1471 թթ. հայկական ձեռագրերում նա հիշատակվում է իբրև Հայոց թագավոր, սակայն նրա թագավորության տարածքը սահմանափակված էր միայն Աղթամար կղզու և առափնյա որոշ տարածքով: Սմբատ Արծրունին վերջին անգամ Հայոց թագավոր է հիշատակվում 1471 թ., որից հետո հիշատակագիրները նրա մասին լռում են:

Պատմական այս իրադարձությունը վկայությունն է այն բանի, որ հայկական պետականության վերականգնման գաղափարը երբեք չէր մոռացվել հայ ազգային-եկեղեցական շրջաններում:

Հայաստանն ազատագրելու Ստեփանոս Սալմաստեցու ծրագիրը

Արևմուտքից օգնություն ստանալու նպատակով առաջին խորհրդաժողովը հրավիրել է Ամենայն Հայոց կաթողիկոս **Ստեփանոս Ե Սալմաստեցին (1545-1567)**: Նա ժամանակի ամենագարգացած հոգևորականներից էր, եղել է մատենագիր, բանաստեղծ, գիտեր մի քանի օտար լեզուներ: Նախապես պաշտոնավարել էր Կ.Պոլսում, Լեհաստանում, Ռուսիայում, քաջածանոթ էր ժամանակի քաղաքական իրադարձություններին: Սալմաստեցին Հայաստանի ազատագրության համար կապեր է հաստատում հակասումայան լիգայի երկրների հետ: 1547 թ. Ս. Էջմիածնում նա հրավիրում է արևելահայ մելիքների և բարձրաստիճան հոգևորականների («Տերանց Հայոց») գաղտնի խորհրդաժողով: Բուռն քննարկումներից հետո խորհրդաժողովը որոշում է կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Վենետիկ և Հռոմ:



Ստեփանոս Ե Սալմաստեցի

Վենետիկում և Հռոմում տարվող բանակցություններից պարզ է դառնում, որ կաթողիկ եկեղեցու առաջնային նպատակը ոչ թե Հայաստանի ազատագրումն էր, այլ, նախևառաջ, կաթողիկ եկեղեցու գերիշխանության հաստատումն Արևելքում: Չնայած այդ ժամանակ Օսմանյան կայսրությունը սպառնում էր Եվրոպային, այնուամենայնիվ, Եվրոպական տիրակալները, հայերի հետ բանակցությունների հիմքում միշտ դնում էին կաթողիկ եկեղեցուն հնազանդվելու անհրաժեշտությունը: Ահա թե ինչու 1549-1551 թթ. Ստեփանոս Ե Սալմաստեցու բանակցությունները Հռոմի պապի, Վենետիկի հանրապետության և գերմանական կայսեր հետ որևէ էական



Միքայել Ա Սեբաստացի

արդյունք չտվեցին: Չնայած այս ամենին՝ Հայոց կաթողիկոսի վարած նուրբ դիվանագիտությունն օրակարգի հարց դարձրեց Հայաստանի ազատագրության հարցը եվրոպական պետությունների արտաքին քաղաքականության մեջ:

Միքայել Սեբաստացի

1562 թ. մայիսի 20-ին Ստեփանոս Սալմաստեցու աթոռակից կաթողիկոս Միքայել Սեբաստացին Սեբաստիայի Ա. Աստվածածին մայր եկեղեցում հրավիրում է մի նոր գաղտնի խորհրդաժողով: Ի տարբերություն 1547 թ. Էջմիածնի ժողովի՝ սրան մասնակցում էին Հայաստանի՝ ինչպես Պարսկաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության տակ գտնվող հատվածների գործիչներ, ուստի այստեղ բարձրացվում է բովանդակ Հայաստանի ազատագրության հարցը: Խորհրդաժողովի որոշմամբ Եվրոպա է ուղարկվում նոր պատվիրակություն՝ Հռոմի պապի հետ ընդհատված բանակցությունները շարունակելու համար: Պատվիրակության ղեկավար է նշանակվում Աբգար դպիր Եվդոկացին (Թոխաթեցի), ով բանիմաց անձնավորություն էր և սերում էր Արծրունյաց արքայական ընտանիքից:

1563-1564 թթ. Աբգար դպիրը Հայոց կաթողիկոսի անունից բանակցություններ է վարում Վենետիկի հանրապետության ղեկավարության հետ: Աբգար Դպիրն այս անգամ Հռոմի պապին է դիմում ավելի գործնական առաջարկով: Ժողովի դիմումագրի համաձայն՝ հայերը կընդունենին Հռոմեական սրբազան կայսրության տիրակալի գերիշխանությունը, եթե ազատագրված Հայաստանում նշանակվեր նոր թագավոր՝ ի դեմս Արծրունյաց արքայական ընտանիքի շառավիղ Աբգար Դպիրի: Չնայած սկսված բանակցությունները վերջնական արդյունքի չեն հանգեցնում, բայց նաև չեն կասեցնում հայ գործիչների ազատագրական շարժումը:

1563-1564 թթ. Աբգար դպիրը Հայոց կաթողիկոսի անունից բանակցություններ է վարում Վենետիկի հանրապետության ղեկավարության հետ: Աբգար Դպիրն այս անգամ Հռոմի պապին է դիմում ավելի գործնական առաջարկով: Ժողովի դիմումագրի համաձայն՝ հայերը կընդունենին Հռոմեական սրբազան կայսրության տիրակալի գերիշխանությունը, եթե ազատագրված Հայաստանում նշանակվեր նոր թագավոր՝ ի դեմս Արծրունյաց արքայական ընտանիքի շառավիղ Աբգար Դպիրի: Չնայած սկսված բանակցությունները վերջնական արդյունքի չեն հանգեցնում, բայց նաև չեն կասեցնում հայ գործիչների ազատագրական շարժումը:



Ի Թ վ ա կ ա ն ի ս . Լ ա յ ո ճ . ո . Ժ . Գ .
ա մ Խ ե ս թ ի հ ա լ թ ջ հ ա բ գ ա ռ զ ա ղ ա ի ռ ս
Խ ն ղ ռ ե ջ ի զ ա յ ն ս ռ զ ի ռ ս . Ի Լ ո ռ մ

Աբգար դպիրը Հռոմի պապի մոտ



Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ Հայոց եկեղեցին ստանձնեց ազատագրական պայքարի նախաձեռնությունն ու ղեկավարությունը:
2. XV դ. կեսին ովքե՞ր ձեռնարկեցին Հայկական թագավորության վերականգնման գործը:
3. Ինչո՞ւ Ջահան շահը ընդառաջեց Աղթամարի Ջաքարիա Գ կաթողիկոսի նախաձեռնություններին:
4. Բնութագրե՛ք Աղթամարի Ջաքարիա Գ կաթողիկոսին: Տվե՛ք նրա գործունեության գնահատականը:
5. Ո՞վ էր Ստեփանոս Սալմաստեցին:
5. Ե՞րբ է հրավիրվել «Տերանց Հայոց» գաղտնի խորհրդաժողովը:
6. Վենետիկի և Հռոմի պապի հետ բանակցություններն ի՞նչ արդյունք ունեցան:
7. Սեբաստիայի գաղտնի խորհրդաժողովը ե՞րբ է գումարվել և ի՞նչ հարց է քննարկվել այնտեղ:
8. Ինչո՞վ ավարտվեց Աբգար Եվդոկացու պատվիրակության առաքելությունը Եվրոպա:

Գործնական աշխատանք

1. Կատարե՛ք «Դիագրամ» վարժությունը՝ համեմատելով կաթողիկոսների գործունեությունը:

Քննարկում

1. Քննարկե՛ք և պատասխանե՛ք հետևյալ հարցին. ինչո՞վ էր պայմանավորված հայերի նկատմամբ Ջահան շահի վարած մեղմ քաղաքականությունը (վերհիշե՛ք նաև VII դասարանի «Հայոց պատմության» համապատասխան դասանյութը):
2. XVI դարի հայ ազատագրական պայքարն ինչո՞ւ դրական արդյունք չունեցավ:





14. ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՋԱՐԹՈՆՔԸ: ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՅԻ



Մայր Աթոռ Ս. Էջմիածին տեղափոխելուց հետո որոշ փորձեր կատարվեցին եկեղեցական-ազգային, հոգևոր-մշակութային կյանքը աշխուժացնելու ուղղությամբ: Սակայն այդ փորձերը որևէ դրական արդյունքի չհանգեցին: Հիմնական պատճառը XIV դարի երկրորդ կեսից մինչև XVII դարի առաջին կեսը (շուրջ 300 տարի)

Հայաստանի տարածքում տեղի ունեցող ավերիչ պատերազմներն էին, որոնց արդյունքում 1639 թ. Հայաստանը վերջնականապես բաժանվեց Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև:

Հարատև պատերազմներն ու տնտեսական կյանքի անկումը, արտագաղթերն ու բռնագաղթերը, մանկահավաքների ու բռնի իսլամացման ահագնացող երևույթները, կաթոլիկ քարոզիչների կազմակերպած հոգեորությունը իսկական դժոխքի էին վերածել երբեմնի ծաղկուն ու շեն երկիրը: Փակվել էին ուսումնական բոլոր հաստատությունները, կանգ էր առել մշակութային կյանքը:

Մայր Աթոռը ևս կիսում էր հարազատ ժողովրդի դառը ճակատագիրը: Այն ենթակա էր սոսկալի կեղեքումների ու հարստահարումների: Նման պայմաններում գահ բարձրացած կաթողիկոսների գլխավոր մտահոգությունը որևէ կերպ Մայր Աթոռի գոյությունը ապահովելն էր: Ս. Էջմիածնի վիճակն ինչ-որ չափով թեթևացնելու նպատակով կաթողիկոսները հաճախ, երբեմն երեք-չորս հոգու կարգում էին աթոռակից կաթողիկոսներ: Այս երևույթը, անշուշտ, թուլացնում էր կաթողիկոսական իշխանությունը, դուռ բացում ներքին ներհակությունների ու երկպառակությունների առջև:

Նույն անմխիթար վիճակում էին նաև Գանձասարի, Աղթամարի, Երուսաղեմի, Կ.Պոլսի նվիրապետական աթոռները:





Հայկական տպագրության սկզբնավորումը

Այդ դարերում տեղի ունեցած ամենանշանակալից երևույթը հայկական տպագրության սկզբնավորումն էր: 1512 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտը հրատարակում է հայկական տպագրության առաջնեկ **«Ուրբաթագիրքը»***: 1512-1513 թթ. ընթացքում Հակոբ Մեղապարտը լույս է ընծայում նաև հոգևոր ու աշխարհիկ բնույթի այլ գրքեր: Հայկական գրահրատարակչական ավանդի շարունակողը դարձավ ազատագրական շարժման գործիչ Աբգար դպիրը: Նա, կատարելով Հայոց կաթողիկոս Միքայել




Ուրբաթագիրք

Ա Սեբաստացու հանձնարարությունը, 1565 թ. Վենետիկում տպագրում է «Օրացույց» և «Սաղմոսարան» գրքերը: Հետագայում Աբգարը տպարանը տեղափոխում է Կ.Պոլիս, ուր սկզբնավորվում է հայկական տպագրությունը, որն, ի դեպ, Օսմանյան կայսրությունում երկրորդն էր՝ հրեաներից հետո: Տպագրության սկզբնավորումն ու ծավալումն ինչ-որ չափով աշխուժացրեց հայ մտավոր կյանքը, հող նախապատրաստեց հոգևոր վերագարթոնքի, կրթական ու լուսավորչական շարժման համար:

Հայ ազգային ու մտավորական զարթոնքի նախակարապետ հանդիսացավ Ստեփանոս Ե Սալմաստեցին: Ցավոք, նրա սկսած գործը ընդհատվեց պարսկա-օսմանյան պատերազմների հետևանքով: Այդ ժամանակ է, որ հայ ժողովուրդը ենթարկվեց իր բազմադարյան պատմության ամենադաժան արհավիրքներից մեկին: 1604 թ. պարսից շահ Աբաս I-ը կազմակերպեց արևելահայ բնակչության (շուրջ 400 հազար մարդ) բռնագաղթը Պարսկաստանի խորքերը, որի հետևանքով ամբողջությամբ հայազրկվեցին

Շիրակը, Արարատյան դաշտը և հարակից շրջանները՝ Կարսից մինչև Ջուղա:

Այս սոսկալի իրողությունը ծանր հետևանքներ ունեցավ Հայոց եկեղեցու համար: Ավերվեցին ու ոչնչացան հարյուրավոր եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ, մշակութային այլ կենտրոններ, ցիրուցան եղան մտավոր



Աբգար Թոխաթեցին և որդին՝ Սուլթանշահը



ուժերը: Շահ Աբասի կարգադրությամբ Ամենայն Յայոց կաթողիկոս Դավիթ Դ Վաղարշապատեցին, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի Աջն ու այլ սրբություններ տեղափոխվեցին Սպահան: Շահն անգամ ձեռնամուխ եղավ Սայր Աթոռ Ս. Էջմիածնի վանքը Նոր Ջուղա տեղափոխելու խելահեղ ծրագրին: Բարեբախտաբար, նրա այդ փորձը, հանդիպելով հայ հոգևորականության համառ դիմադրությանը, ձախողվեց:

Սպահանում և շրջակայքում տեղավորված նորաբնակ հայերին Պարսկաստանի հետ կապելու համար շահի կարգադրությամբ թուլյատրվեց կառուցել եկեղեցիներ, հիմնադրել դպրոցներ: Ընդամենը մի քանի տարում այստեղ կառուցվեցին 80 եկեղեցիներ: Նոր Ջուղայում հիմնադրվեց առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքը: Շուտով վանքին կից բացվեց դպրոց և տպարան, որը բովանդակ Արևելքի առաջին տպարանն էր:

Մայր Աթոռի և հոգևոր-մշակութային կյանքի գարթոնքը: Մովսես Գ Տաթևացի

XVII դարի 30-ական թվականներին սկսվում է հայ ժողովրդի և Յայոց եկեղեցու վերագարթոնքը, որն անխզելիորեն կապված է **Մովսես Գ Տաթևացի** կաթողիկոսի գործունեության հետ: Մովսես Տաթևացին Յայոց եկեղեցու և ժողովրդի պատմության ամենաականավոր դեմքերից է: Նա ծնվել է 1578 թ. Սյունիքի Խոտանան գյուղում: Աշակերտել է Ժամանակի ամենանշանավոր վարդապետներից: Տարիներ շարունակ Մովսես Տաթևացին պաշտոնավարել է Երուսաղեմի և Կ.Պոլսի հայոց պատրիարքություններում: 1613 թ. հաստատվելով Տաթևի վանքում՝ Մովսես Տաթևացին ձեռնամուխ եղավ վանական նոր կյանքի և հոգևոր նոր գործունեության ծավալմանը:



Մովսես Գ Տաթևացի

Իր աշակերտների աջակցությամբ նա հիմնադրեց բազմաթիվ դպրոցներ, բացեց և վերաբացեց վանքեր, կառուցեց և վերակառուցեց եկեղեցիներ: Վերաբացվեցին Սաղմոսավանքի, Հովհանավանքի և Տաթևի վանական դպրոցները: 1629 թ. Մովսես Տաթևացին ընտրվեց Ամենայն Յայոց կաթողիկոս: Շատ կարճ ժամանակահատվածում (1629-1632) նա կարողացավ լուրջ քայլեր ձեռ-



նարկել Մայր Աթոռը շենացնելու ուղղությամբ: Շահ Աբասից ստանալով լքված ու ավերված Ս. Էջմիածնի վանքը նորոգելու թույլտվություն Մովսես Գ Տաթևացին վերանորոգում է վանքը, վեհարանը, կառուցում Մայր տաճարի գմբեթը, շրջապարիսպը, Երևանի Ս. Ջորավոր եկեղեցին և այլն: Տաթևացին վերացնում է նաև մեծ չարաշահումների ու երկպառակտությունների տեղիք տվող աթոռակից կաթողիկոսների ինստիտուտը և վերականգնում Ամենայն Հայոց կաթողիկոսների միանձնյա իշխանությունը:



Հովհանավանք

Իր անխոնջ գործունեության համար Մովսես

Տաթևացին արժանացել է ազգային-եկեղեցական սրբի լուսապսակի:

Մովսես կաթողիկոսի աշակերտները նրա մահից հետո շարունակեցին զարգացնել իրենց ուսուցչի լուսավորական, կրթական ավանդները:

**Հակոբ Դ Ջուղայեցի
Ս. Էջմիածնի 1677 թ.
գաղտնի խորհրդաժողովը**

XVII դ. երկրորդ կեսին ծավալված շարժումը չըջանցեց նաև Ս. Էջմիածինը: Այդ շարժումը կազմակերպելու և ուղղություն ցույց տալու գործում մեծ էր Ամենայն Հայոց կաթողիկոս **Հակոբ Դ Ջուղայեցու (1655-1680)** դերը: Հակոբ Ջուղայեցին ժամանակի ականավոր հոգևորականներից էր: Մեծ դեր է խաղացել Մայր Աթոռի բարեկարգման գործում, պայքարել Հայաստանում և հայկական գաղթավայրերում գործող կաթոլիկ քարոզիչների դեմ: Հայկական գրատպությունը խթանելու նպատակով Եվրոպա է ուղարկել Մատթեոս Վանանդեցուն, Ոսկան Երևանցուն և ուրիշների: Հակոբ Ջուղայեցին նրանց նաև հանձնարարել էր Եվրոպայում նպաստավոր կարծիք ստեղծել Հայաստանի ազատագրության հարցի շուրջ և միաժամանակ հող նախապատրաստել հայ-արևմտաեվրոպական քաղաքական ու դավանաբանական բանակցությունների համար:



Հակոբ Դ Ջուղայեցի



Այս հարցերը քննելու նպատակով Հակոբ Ջուղայեցին 1677 թ. Ս. Էջմիածնում հրավիրում է գաղտնի ժողով, որին մասնակցում էին Սյունիքի և Արցախի մելիքներն ու բարձրաստիճան հոգևորականները՝ թվով 12 մարդ: Ժողովը որոշեց օգնության խնդրանքով դիմել Հռոմի պապին և եվրոպական հզոր տերություններին: Նորությունն այն էր, որ հայ ազատագրական շարժման պատմության մեջ առաջին անգամ ժողովի անունից Հակոբ Դ-ն օգնության խնդրանքով հատուկ ուղերձ է հղում նաև Ռուսաստանի ցարին: Ժողովը ընտրում է հատուկ պատվիրակություն, որն անհապաղ ուղևորվելու էր Արևմուտք: 1678 թ. դեկտեմբերին հայկական պատվիրակությունը Հակոբ Ջուղայեցու զլխավորությամբ ժամանում է Կ.Պոլիս՝ եվրոպա մեկնելու համար:

Սակայն ինչ-ինչ պատճառներով պատվիրակությունը Կ. Պոլսում մնաց մինչև 1680 թ. օգոստոսը, երբ կաթողիկոսի անսպասելի մահն ստիպեց պատվիրակությանը վերադառնալ Հայաստան:



Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ և որտե՞ղ է սկզբնավորվել հայկական տպագրությունը:
2. Ի՞նչ գրքեր է տպագրել Հակոբ Մեղապարտը:
3. Ո՞վ շարունակեց տպագրության գործը, ինչո՞վ է նա հայտնի:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հայոց եկեղեցու համար 1604 թ. բռնագաղթը:
5. Եկեղեցական և մշակութային ի՞նչ նշանավոր կառույցներ հիմնադրվեցին:
6. Ո՞ւմ գործունեության հետ է կապված հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու վերագործունի սկիզբը XVII դ. 30-ական թվականներին: Թվարկե՛ք նրա իրականացրած կարևոր ձեռնարկները:
7. Ինչո՞վ է հայտնի Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը:



8. Ե՞րբ և ի՞նչ նպատակով էջմիածնում գումարվեց գաղտնի խորհրդաժողով:
 Ի՞նչ որոշում կայացրեց այդ ժողովը:

Ք ն ն ա ր կ ու մ

Ինչո՞ւ էր շահ Աբաս I-ը ցանկանում հայ հոգևոր իշխանության կենտրոնը տեղափոխել Սպահան:

Նշե՛ք այդ ծրագրի ձախողման պատճառները:

Բ ա ո ա ր ա ն

Ուրբաթագիրք – հայկական առաջին տպագիր գիրքը (Վենետիկ, 1512 թ.):

Տպագրիչն է Հակոբ Մեղապարտը: Ուրբաթագրքում ամփոփված են չափածո աղոթքներ, առասպելական պատմություններ և այլն:



Լ ր ա ց ու լ ի չ ն յ ու թ

Առափն Դավրիժեցիին Մովսես Գ Տաթևացու կարողիկոսության մասին

Մովսես վարդապետը մեծ չարչարանքներով և շատ դրամ ծախսելով՝ մոտ հազար թուման, հազիվ կարողացավ վերացնել հարկի ծանր բեռը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Սուրբ աթոռի ազատության լուրը տարածվեց ընդհանուր աշխարհի հայ ազգի մեջ. ամենքը լցվեցին անպատմելի ուրախությամբ, ցնծության ձայնով գոհանում էին Աստծուց:

Եվ մեր սուրբ հայրը մաքրակենցաղ էր ու սրբասուն, երկայնամիտ էր ու ողորմած: Սրա ձեռքով շատ գերիներ ազատվեցին գերիչներից, որովհետև սրա ժամանակ անհաշտ խռովություն կար պարսիկների և օսմանցիների միջև, ուստի ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից: Գերիներից ում էլ տեսնում էր, անպատճառ գնում էր և ազատում:

Սա մնաց բարձրագահ աթոռի վրա՝ Ս. Էջմիածնում ուղիղ վարդապետությամբ, նորոգեց ավերակները նոր շինությամբ, պայծառացրեց միաբաններով ու վարդապետներով, պատշաճ ու հաստատուն ժամակարգությամբ հարստացրեց եկեղեցական անոթներով, նյութական հարստությամբ:



15. ԿԱԹՈՒԿ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ: ՄԻՆԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես գիտենք, հայության շրջանում կաթոլիկ քարոզչությունը սկսվել էր դեռևս Կիլիկյան հայկական թագավորության ժամանակներում՝ հանդես գալով որպես ունիթորական շարժում: Չնայած առանձին դեպքերին, ունիթորներին չհաջողվեց կաթոլիկացնել Կիլիկիայի հայությանը: Կաթոլիկ միսիոներների գործունեությունը հաճախ դուրս էր գալիս Կիլիկիայի աշխարհագրական սահմաններից և տարածվում դեպի Մեծ Հայք, դեպի Սերժավոր և Միջին Արևելքի հայկական գաղթավայրերը:

Կաթոլիկության տարածումը հայերի մեջ



Միսթար Սերաստացի

XIV դարի առաջին կեսին կաթոլիկ քարոզիչների հաջողվում է հաստատվել Նախիջևանի գավառի մի շարք բնակավայրերում: 1350 թ. Նախիջևանը դառնում է կաթոլիկ եպիսկոպոսության նստավայր:

Կաթոլիկ քարոզիչներն ունեին նյութական լայն հնարավորություններ: Հայ բնակչության համակրանքը շահելու համար նրանք նյութական օժանդակություն էին ցույց տալիս իրենց հետևորդներին, կազմակերպում էին անվճար բուժօգնություն, բացում դպրոցներ, տարածում գրականություն: Այս ճանապարհով նրանց հաջողվեց դավանափոխ անել հայության որոշ հատվածների: Օգտվելով Հայոց եկեղեցու ծանր վիճակից՝ պապական գործակալները փորձում էին իրականացնել նրա միությունը կաթոլիկ եկեղեցու հետ:

Միաժամանակ այն կարծիքն էր տարածվում, թե եկեղեցիների միավորման և կաթոլիկ դավանանքն ընդունելու դեպքում հնարավոր կլիներ եվրոպական երկրների օժանդակությամբ հայերին ազատագրել օտար տիրապետություններից:

XVII դ. սկզբներին կաթոլիկությունը որոշ տարածում ուներ նաև Ղարաբաղի խանությունում, Գանձակում, Շիրվանում, Թավրիզում և այլուր: Սակայն Հայոց եկեղեցու հովվապետների, հայ հոգևորականության լավագույն ներկայացուցիչների ջանքերով հնարավոր եղավ հակահարված տալ կաթոլիկ քարոզչությանը: Այսպես՝ 1706 թ. Աղեք-



սանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսին հաջողվեց Յուսեին շահից ստանալ հատուկ հրովարտակ, որի համաձայն արգելվում էր Պարսկաստանում կաթոլիկ նոր միաբանությունների ստեղծումը: 1736 թ. Նադիր շահի հատուկ հրովարտակով խստագույնս արգելվեց կաթոլիկ քարոզչությունը հայերի շրջանում և ընդհանրապես նրանց գործունեությունը Պարսկաստանում:

Կաթոլիկ միսիոներներն ակտիվ գործունեություն էին ծավալել նաև Արևմտյան Հայաստանում: Նրանց քարոզչության հետևանքով կաթոլիկ համայնքներ էին ստեղծվել մի շարք քաղաքներում ու շրջակա գյուղերում, ինչպես նաև Օսմանյան կայսրության տարածքում գտնվող հայկական գաղթավայրերում: 1740 թ. նույններին Հալեպում Հայ կաթողիկե եկեղեցին պաշտոնապես հռչակվեց իբրև կառույց և եկեղեցական առանձին նվիրապետություն:



Մխիթարյան միաբանության Վիեննայի Սայրավանքի խորանը (1874 թ.)

Կաթոլիկ քարոզչությունը հատկապես սարսափելի ավերածություններ գործեց Եվրոպայի հայկական գաղթավայրերում: Կաթոլիկ միսիոներների եռանդուն ջանքերի հետևանքով արդեն XVII դարում լեհահայերն ու հունգարահայերը կաթոլիկացվել էին, իսկ որոշ ժամանակ անց՝ ամբողջությամբ ծուլվել: Հետաքրքիր է նշել, որ Հայաստանում կաթոլիկություն ընդունած հայերի ճնշող մեծամասնությունը հետագայում մահմեդականություն է ընդունել:

Մխիթար Սեբաստացին և Մխիթարյան միաբանությունը

Հայ կաթոլիկ շարժման պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Մխիթարյանները: Նրանք, ընտրելով գործունեության այլ ոլորտ, հետապնդել են հայագիտական, մշակութային նպատակներ:

Մխիթարյան միաբանության հիմնադիրը Մխիթար Սեբաստացին է: Մխիթարը ծնվել է Սեբաստիա քաղաքում 1676 թվականին: Սովորել է Սեբաստիայի, Էջմիածնի, Սևանի և Բասենի վանական դպրոցներում: Քսան տարեկան հասակում ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Արդեն այդ ժամանակ էլ նա որոշել էր ստեղծել վանական մի հաստատություն, որի գլխավոր նպատակն էր լինելու աջակցել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային վերելքին: Մխիթար Սեբաստացին գտնում էր, որ



ստեղծված պայմաններում հայության գոյապայքարի կռվանները պետք է լինեն ոչ միայն հրացանն ու սուրը, այլև գիրքն ու գրիչը: Նա իր առջև դրել էր մի քանի հիմնական խնդիրներ՝ ժողովրդի մեջ զարգացնել **հոգևոր կյանքը, կրթությունը, գրականությունը և մշակույթը:**

Այս խնդիրներին հասնելու համար նախևառաջ անհրաժեշտ էր ունենալ գաղափարակից, հավատարիմ միաբանների մի խումբ, ապա հիմնադրել դպրոց, հավաքել աշակերտություն: Եվ քանի որ հայ հասարակությունն ու Առաքելական եկեղեցին չունեին համապատասխան նյութական միջոցներ, Մխիթարը որոշում է դիմել կաթոլիկ եկեղեցու օգնությանը, որի տրամադրած միջոցներով հնարավոր կլիներ իրականություն դարձնել իր մեծ երազանքը: Մխիթարը գաղտնի ընդունում է կաթոլիկություն և 1701 թ. Կ. Պոլսում իր շուրջը համախմբելով գաղափարակից ութ աշակերտների՝ ստեղծում է վանական միաբանություն: Երկու տարի անց՝ 1703 թ., դավանաբանական հալածանքներից խուսափելու նպատակով Մխիթարը տեղափոխվում է Վենետիկի հանրապետություն: **1717 թ. Վենետիկի ղեկավարությունը Մխիթարին շնորհում է քաղաքամերձ Ս. Ղազար լքված կղզին:** Մխիթարը Ս. Ղազարում կառուցում է եկեղեցի, բացում դպրոց, հիմնադրում մատենադարան, կազմում դասագրքեր, հրատարակում գրքեր: Մի քանի տարի անց նորաստեղծ դպրոցը տալիս է իր առաջին շրջանավարտները, ծավալում գիտամշակութային լայն գործունեություն: Մխիթարը և Մխիթարյանները թեև կաթոլիկներ էին, սակայն հավատարիմ էին մնացել ազգային ծեսերին ու արարողակարգին, հայասեր ու հայրենասեր էին:



Ս. Ղազար կղզին



Մխիթարի և նրա առաջին աշակերտների հավատամքն էր. **«ազգը չզոհել կրոնին և կրոնը՝ ազգությանը»**, հետևաբար՝ նրանք մերժում էին հայերի կրոնական երկպառակտությունը և կաթոլիկ քարոզչությունը նրանց շրջանում: Մխիթարը դարձավ հայերի մեջ գրական մեծ շարժման հիմնադիրը: Հատկապես նշանակալից է նրա գեղարվեստական նուրբ ճաշակով հրատարակած «Աստվածաշունչը» և կոթողային երկհատոր «Հայկազյան բառարանը»:

Մխիթարի սկսած գործը շարունակեցին աշակերտները: Միքայել Չամչյանը դարձավ հայ նոր պատմագրության հիմնադիրը: Նրա գրչին է պատկանում եռահատոր **«Պատմություն Հայոց»-ը** (1784-1786 թթ.), որը մեր ժողովրդի համահավաք, ամբողջական ու քննական առաջին պատմությունն էր: Մխիթարյան միաբանության ակնառու գործիչներից էին Ա. Բագրատունին, Գ. Ավետիքյանը, Ղ. Ալիշանը և շատ ուրիշներ:

Հ ա ր ց ե ր և առաջադրանքներ

1. Ի՞նչը նպաստեց Արևելյան Հայաստանում կաթոլիկության տարածմանը: Ի՞նչ միջոցների էին դիմում կաթոլիկ քարոզիչները հայ բնակչության համակրանքը շահելու համար:
2. XVIII դ. սկզբին ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին արևելահայերի շրջանում կաթոլիկության դեմ պայքարի նպատակով:
3. Արևմտյան Հայաստանի ո՞ր քաղաքներում էին ստեղծվել կաթոլիկ համայնքներ:
4. Ե՞րբ և ո՞վ հիմնադրեց Մխիթարյան միաբանությունը:
5. Ինչո՞վ էր առանձնանում Մխիթարյան միաբանության գործունեությունը: Ո՞րն էր նրանց հավատամքը:
6. Ովքե՞ր էին Մխիթար Սեբաստացու նշանավոր հետևորդները: Ներկայացրե՛ք նրանց գրական ժառանգությունը:

Ք ն ն ար կ ու մ

1. Ինչո՞ւ XVI-XVII դարերում կաթոլիկությունը հայերի շրջանում որոշակի տարածում գտավ:
2. Մեկնաբանե՛ք Մխիթարյանների հավատամքի՝ «ազգը չզոհել կրոնին և կրոնը՝ ազգությանը» իմաստը:



16. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XVIII դարու

ԵԿԵՂԵՑԻՆ XVIII դարի առաջին կեսին



Մայր տաճարի իջման Ս. Սեղանը

Հակոբ Դ Ջուղայեցուց հետո Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց նախկին պատրիարք **Եղիազար Ա Այնթափցին (1681-1691)**: Իր տասնամյա գործունեության շրջանում նորընտիր կաթողիկոսը զբաղվեց շինարարությամբ՝ կառուցեց Մայր տաճարի իջման Ս. Սեղանը և երկու խորանները, նորոգեց բազմաթիվ եկեղեցիներ:

Շինարարական լայն գործունեությամբ է զբաղվել նաև հաջորդ կաթողիկոսը՝ **Նահապետ Ա Եղեսափցին (1691-1705)**: Նրա օրոք են կառուցվել Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցին, Երևանի Կոնդի և Քանաքեռի եկեղեցիները: Հայ ժողովրդի ազատագրական գործը գլուխ բերելու համար Իսրայել Օրին 1699 թ. ապրիլին կաթողիկոսի հետ հանդիպման ժամանակ առաջարկել է դավանա-

բանական առանձին զիջումներ կատարել կաթոլիկ եկեղեցուն: Կաթողիկոսը վարել է խիստ զգուշավոր քաղաքականություն և պարսկական իշխանությունների հետ հարաբերությունները չվատացնելու համար հրաժարվել է աջակցել Իսրայել Օրուն:

XVIII դ. սկզբներին Կովկասը դառնում է հզորացող Ռուսաստանի հետաքրքրությունների տարածաշրջան: Հայ ազատագրական շարժումը Իսրայել Օրուն ջանքերով շրջադարձ է կատարում դեպի Ռուսաստան: 1709 թ. հուլիսի 18-ին Պետրոս Մեծին ուղղված գրությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցին հավաստում է իր և Մայր Աթոռի ռուսական կողմնորոշումն ու հույս հայտնում, թե Ռուսաստանն ի վերջո պիտի ազատագրի հայ ժողովրդին:

Շուտով սկսվում է թուրք-պարսկական հերթական պատերազմը: Ինչպես ամբողջ հայ ժողովուրդը, այնպես էլ Մայր Աթոռը բազում դժվարություններ կրեցին: Հենց այդ ժամանակ է, որ պարսկա-օսմանյան տիրապետությունների դեմ ուռքի կանգնեցին



արցախցիները և սյունեցիները, որոնք ութամյա (1722-1730 թթ.) պայքարի ընթացքում բազում հաղթանակներ տանելով՝ կերտեցին Արցախի և Սյունիքի հայկական ինքնավար իշխանությունները: Իրադարձություններին գործուն մասնակցություն ցուցաբերեցին հայ հոգևորականության բազմաթիվ ներկայացուցիչներ, իսկ Գանձասարի (Աղվանից) կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը Արցախի ազատամարտի կազմակերպիչն էր և առաջնորդը:

Մայր Աթոռի դրությունը բարելավվեց այն ժամանակ, երբ կաթողիկոսական գահ բարձրացավ **Աբրահամ Գ Կրետացին (1734-1737)**: Ցուցաբերելով մեծ խորաթափանցություն և դիվանագիտական հմտություն՝ նա իր աջակցությունն է հայտնել պարսից Նադիր խանին: 1735 թ. նա ընծաներով ընդառաջ գնաց Նադիրին և այդ ձևով Մայր Աթոռն ու Հայաստանը ազատեց ավերածություններից ու կողոպուտից: Կրետացին 35 հրովարտակ է ստացել Նադիրից՝ ի շահ եկեղեցու և հայ ժողովրդի: Մասնավորապես, Մայր Աթոռը ազատել է հարկերից, հաստատել տվել Ամենայն Հայոց կաթողիկոսության իրավունքները, ընդարձակել Ս. Էջմիածնի կալվածքները: Նա 15 կգ քաշով ոսկե ջահ է ստացել Մայր տաճարի համար, գերությունից ազատել հազարավոր հայերի ու վրացիների: Նադիրի թագադրության արարողության ժամանակ Հայոց կաթողիկոսը նրա մեջքին կապել է շահական իշխանության խորհրդանիշ սուրը: Պարսկաստանի պատմության մեջ առաջին և վերջին անգամ նման իրավունք է վերապահվել քրիստոնյա հոգևորականին:



*Նոր Նախիջևան.
Ս. Խաչ եկեղեցին (1783 -1786 թթ.)*



ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՆՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ XVIII դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՏԻՆ



Սիմեոն Ա Երևանցի

Աբրահամ Կրետացուց հետո գահակալող կաթողիկոսները փորձել են Մայր Աթոռի համար ապահովել խաղաղ ու բարգավաճ վիճակ, ծավալել շինարարական գործունեություն, աջակցել են ազատագրական շարժմանը:

Հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու պատմության այս բարդ ժամանակաշրջանում հանդես է գալիս եկեղեցական ականավոր գործիչ, հայոց նշանավոր կաթողիկոսներից մեկը՝ Սիմեոն Ա Երևանցին (1763-1780): **Սիմեոն Ա Երևանցին** մեծ ջանքերի գնով կարողացավ բարձրացնել Մայր Աթոռի հեղինակությունը և հաստատել կաթողիկոսական միանձնյա իշխանություն: Նա ծավալեց շինարարական-վերանորոգչական լայն գործունեություն: Վերականգնեց Էջմիածնի կաթողիկոսության իրավունքը Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ: Իրականացրեց նախորդ սերունդների վաղեմի երազանքը և 1771 թ. Էջմիածնում հիմնադրեց տպարան, իսկ 1776 թ.՝ թղթի գործարան: Կաթողիկոսը մեծ ուշադրություն է դարձնում հատկապես Էջմիածնի վանական դպրոցին, այն համալրում դասախոսական կարող ուժերով: Սիմեոն Երևանցին

հեղինակել է աստվածաբանական, դավանաբանական, փիլիսոփայական, պատմաիրավագիտական բազմաթիվ երկասիրություններ:

Սիմեոն Երևանցին չի խրախուսել Հայաստանի ազատագրության ուղղությամբ ձեռնարկված այն ճիգերը, որ գործադրում էին Հովսեփ Էմինը, Մշո Ս. Կարապետի վանքի վանահայր Հովման վարդապետը և Մադրասի քաղաքական խմբակը: Այսպես՝ Մադրասի ազատագրական խմբակի հրատարակությունները և հատկապես Մովսես Բաղրամյանի «Նոր տեսության, որ կոչվում է հորդորակ» երկասիրությունը հայ երիտասարդությանը հորդորում էին զենքը ձեռքին ապստամբել մահմեդական բռնակալների դեմ և հասնել բաղձալի ազատության. «Եկեք ուղքի՛ ելնենք, զգաստանանք ու փրկագործենք բերկրալի Արարատյան դրախտը մեր եղեմակերտ»: Սիմեոն Երևանցին նույնպես դեմ չէր Հայաստանի ազատագրության գաղափարին, սակայն վաղաժամ էր



համարում նրա արժարձունը տվյալ պատմական պայմաններում: Նա այդ շարժումները համարում էր անպատրաստ և վնասակար: Զ. Էմինի, Շ. Շահամիրյանի, Մ. Բաղդամյանի և մյուսների գործելակերպը կարող էր ավելի վնաս բերել, քան օգուտ: Ահա թե ինչու նա ընդդիմանում էր ապստամբության բացահայտ քարոզչությանը՝ զգուշանալով հարվածի տակ դնել Մայր Աթոռն ու ծանր վիճակում գտնվող հայությանը:

Սիմեոն Երևանցուն հաջորդեց **Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսը (1780-1799)**, որը Մայր Աթոռում 1782 թ. հրավիրեց գաղտնի խորհրդաժողով: Ժողովը դիմեց Եկատերինա II կայսրուհուն՝ խնդրելով նրա հովանավորությունը: Կաթողիկոսն առաջարկում էր Զայաստան ուղարկել որոշ քանակությամբ զորք, որի առկայության դեպքում ոտքի էին կանգնելու բազմաթիվ հայեր: Զամաստեղ ռազմական գործողություններով Զայաստանն ազատագրվելու էր, և Ռուսաստանի հովանավորության ներքո ստեղծվելու էր հայկական անկախ պետություն: Նման մեկ այլ դիմում էլ 1797 թ. կաթողիկոսն ուղարկել է ռուսական կայսր Պավել I-ին: Կաթողիկոսը խրախուսել է ռուսահայոց թեմի առաջնորդ Զովսեփ արքեպ. Արղության-Երկայնաբազուկի, կոմս Զ. Լազարյանի, հնդկահայ մեծահարուստ Շ. Շահամիրյանի և մյուսների ազատագրական ձեռնարկումները, անգամ համակրանքով արտահայտվել մադրասցիների ծրագրային «Որոգայթ փառաց» երկասիրության մասին: Ղուկաս Կարնեցու հորդորանքով է, որ Մադրասում Զարություն քահանա Շմավոնյանը սկսում է հրատարակել հայկական առաջին պարբերականը՝ **«Ազդարարը»**:

Ղուկաս Ա Կարնեցու մահից հետո հայրապետական աթոռին հավակնում էին մի քանի թեկնածուներ, որոնցից կաթողիկոս է ընտրվում **Զովսեփ արքեպիսկոպոս Արղության-Երկայնաբազուկը**: Նրա թեկնածությունը հավանություն է ստանում ինչպես սուլթանի և շահի, այնպես էլ ցարի կողմից: Նորընտիր կաթողիկոսը 1800 թ. վերջին շտապում է Էջմիածին՝ օծում ստանալու: Սակայն ճանապարհին՝ Թիֆլիսում, 1801 թ. մարտի 9-ին հանկարծամահ է լինում: Կաթողիկոսական աթոռը դառնում է պայքարի առարկա:






Լրացուցիչ նյութ

«Որոգայք փառայ»-ը Հայաստանի ապագա խորհրդարանի հոգևորական պատգամավորի մասին

Ամենայն Հայոց Հայրապետության սուրբ աթոռից պետք է ընտրվի մի արքեպիսկոպոս, որ մտնի Հայոց տուն (խորհրդարան - խմբ.)՝ իբրև համայն եկեղեցականների փոխանորդ (պատգամավոր - խմբ.): Այդ եպիսկոպոսն ամեն կարգի խորհրդակցություններում պետք է համարվի որպես երկու տանուտեր, մեկը՝ հոգևոր և մեկ էլ՝ մարմնավոր:

Եվ նա բազմելու է հայոց տան աջ թևի առաջին աստիճանի երկրորդ աթոռին՝ նախարարի (նախագահի, որը բազմելու էր առաջին աթոռին - խմբ.) աջակողմը, առջև՝ մի փոքրիկ սուրբ սեղան, սեղանի վրա մի Ավետարան և մի խաչ:



Երևանի Ս. Սարգիս եկեղեցի



Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր եկեղեցիներն են կառուցվել Նահապետ Ա Եդեսացու օրոք:
2. Ո՞վ էր Իսրայել Օրին: Ինչպե՞ս վերաբերվեց Հայոց եկեղեցին Օրու ծրագրերին:
3. Ի՞նչ դեր է խաղացել Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը XVIII դ. սկզբի Արցախյան ազատամարտում:
4. Ինչո՞վ է աչքի ընկել Աբրահամ Գ Կրետացու կարճատև գահակալման շրջանը:
5. Մայր Աթոռի հեղինակությունը բարձրացնելու համար ի՞նչ ձեռնարկներ իրականացրեց Սիմեոն Ա Երևանցին:
6. Ղուկաս Ա Կարնեցին Հայաստանի ազատագրության հարցի լուծումը ո՞ւմ հետ էր կապում:
7. Որտե՞ղ հրատարակվեց հայերեն առաջին պարբերական «Ազդարարը»:

Գործնական աշխատանք

Կատարե՛ք «Դիագրամ» վարժությունը՝ համեմատելով կաթողիկոսների գործունեությունը:

Ք ն ն ա ր կ ու մ

Ճի՞շտ վարվեց արդյոք Սիմեոն Ա Երևանցին՝ չպաշտպանելով Հովսեփ Էմինի և Մադրասի խմբակի ազատագրական ձեռնարկները: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գլուխ I

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

1. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐՆ ԱՆԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ..... 5

2. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ..... 12

3. ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԻՍՏ ԱՆԻԻ ԾԱԴԿՈՒՄԸ 18

4. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ..... 22

5. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՐԾԱԴՐՎԱԾ ՃՆՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ 26

Գլուխ II

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

6. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 33

7. ՀԱՅ-ՀՈՈՍԵԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .. 39

8. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 45

9. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ 50



Գլուխ III

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

10. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ...	54
11. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ	60
12. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ	65
13. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ XV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ	71
14. ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԹՈՆՔԸ: ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՑԻ	76
15. ԿԱԹՈՒԼԻԿ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ: ՄԻՒԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	82
16. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XVIII ԴԱՐՈՒՄ	86



Հայոց եկեղեցու պատմություն

**Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի
դասագիրք**

Լեզվական խմբագիր՝ Ա. Ոսկանյան

Սրբագրիչ՝ Ա. Պապյան

Գեղարվեստական և տեխնիկական խմբագիր՝

Մ. Պետրոսյան

Համակարգչային շարվածքը՝

Ա. Այվազյանի

Ա. Սիրզաթունյանի



Չափսը՝ 70x100 1/16: Ծավալը՝ 6 պայմ. մանուկ:

Տպաքանակը՝ 37500: Պատվեր՝ 1367:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում